891.99
Բ-89
Բուլատով, Հ.
Բանաստեղծություններ։ Հ.2.
6194
604

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

II ՀԱՏՈՐ.

ՄԱՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.
1892
(58)

Արտաբերում

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ.

,91.99
Թ-89

ՄՇՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

734.
6194
Ա/574

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.
1892

1900.IV-18.

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 7 Мая 1892 г.

Типографія М. Бархударянъ, Мясницкая, д. насл. Ананова.

ԷՆՈՒԾ.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ.

I.

Մպշոդ[1] դիշեր է. ահա քեզ Լօռու
Զքնաղ լեռները ձգում են հեռու.
Այս լեռների մէջ իւր աւանդներով
Մի պարզ ժողովուրդ ապրում էր
սիրով,
Եւ նորա հոգին յստակ էր և վէս
Իրան լեռների, աղբիւրների պէս:
Այն օրից օրեր դեռ շատ չեն անցել
Եւ հաստատ վէրքը դեռ չէ հեռացել.—

---

1 Ամպշոդ—արևի կամ լուսնի աղօտ լուսաւորութիւնը ամպի տակից:

Լսվում են մէկ-մէկ հնուց երգերը
Եւ հին սերունդի բոլոր կրքերը—
Նրանց արտասը, արտրքն անվեհեր
Հնչող ձայներում պահում են անմեռ:

II.

Տեսնում ես, գիւղը մռայլի միջին
Սևին է տալիս սարի ստորոտում,
Նրանից ներքև խոր ու խաւարաչին
Ձորում խլաձայն գետն է որոտում:
Շէն ու շքաղաք դրկել է Մորփէն
Եւ ոչ մի տեղից չէ լսվում շշուն,—
Կէս գիշերուանից լռել են արդէն
Սայլորդի երգը և հովուի շհուն:

III.

Այս ժողովրդին միշտ պատրաստ ու կազմ
Իրանց քաջասիրտ իշխան-մեծերը
Առաջնորդում էին գէպի պատերազմ
Եւ վճռում էին ծագած վէճերը.
Իսկ հիմայ նրանք հանդիստ ու խաղաղ
Իրանց խուղերում և հին վրանում

Սպրում են աղքատ և արդէն անցեալ
Արկածներիցն են պատմութիւն անում.—
Այս ձորերումն էր, որ Բագրատունին
Բախտի հետ խաղաց իւր խաղը վերջին,
Սէպ Տուտէորդին, Օհան Օձնեցին
Հայրենեաց պաշտպան սուսերն օրհնեցին.
Այստեղ տակաւին պապական խօսքով
Զրոյց է անում ծեր շինականը,
Թէ այս ձորերում պարսկատանջ բազկով
Կռիւ է արել Մամիկոնեանը.
Կռիւ է արել հաւատի համար
Ընդդէմ անօրէն թշնամիների,
Կառուցել ձերմակ, բարձրաքաշ տաճար
Իբրև պահապան իրան աշխարհի։
Եւ այսօր ապրում է այն քաջարի
Նախնեաց սերունդը հայրերի շինած
Հրաշակամար, քանդուած տաճարի
Մեծ ղօրութեանը միայն ապաւինած...
Բայց առ ու փախի պատմութիւններով
Սնուել են նրանց միտքն ու սրտերը,
Եւ ահա այսօր տեսնում ենք ղօրով
Նախնեաց բարքերի նսեմ ստուերը։

IV.

Ո՞ւքան սիրել եմ, չքնաղ Հայրենիք,
Քո սար ու ձորում մեծացած մարդկանց
Սովորութիւնքը պարզ ու վայրենի—
Ատելը անկեղծ, սիրելը սրտանց.
Երբ որ միասին զուարճանում են
Իրանց օջախում, թէկուզ չոր հացով,
Միասին վարում, միասին ցանում են,
Մխիթարվում են մի բախտի յուսով։
Նրանց յարկի տակ շատ ու շատ անգամ
Ես էլ եմ նրանց եղել խնդակից,
Երբ որ, ցաւները մոռացած, առ ժամ
Ուրախացել են արցունքի տակից։
Սիրել եմ տանջուել նրանց ցաւերով
Անարդար հասած օխերիմ ձեռքից,
Եւ պատանեկան վստահ ցնորքով
Նրանց բողոքին լինել ձայնակից. . .
Եւ կարդացել եմ, քանի տեսնում եմ
Քո շեմքի վերայ օտարի հետքեր,
Եւ կրհառաչեմ, քանի ծխում են
Քո կրծքի վերայ նոր անոր վէրքեր։
Ահա վերջին յարութիւն առար
Քո վարած կեանքով իմ յուղուած մտքում—

Սառաւել տխուր, առաւել խաւար,
Քան ցոյց տուածը պատմողի դրքում.—
Դէմքեր չարչարուած նահատակների,
Յուսահատ արտունջ մեռնող ձայների...
Ահա, և մթնում, կուչ եկած մնջիկ,
Լալիս է մենակ մի սիրուն աղջիկ:
Այսպէս՝ այն սէրը, որ փոթորկալի
Դու վառել ես քո որդոյ սրտերում,
Անլուր տխրութեամբ և անլռելի
Հեծում է նրանց բոլոր երգերում:

V.

Զարաբաղդ աշխարհ, սիրով շունչ առած
Քո երգիչները քանի երգ հնչեն,
Մինթէ խաւարի բռնութեան տարած
Զոհերի ցաւով պիտի հառաչեն:
Եւ ինչո՞ւ համար քո զաւակները
Գէթ ընտանեկան չունեցան խնդում,
Բի՞չ էին դրսից հասած ցաւերը,
Բի՞չ էր օտարը նրանց դիշատում...
Թշուառ, չիմացար ստեղծել դու կին,
Գիշերուայ մթնում փնտրեցիր նրան,
Լռութեան կնիք դրիր շրթունքին,

Եւ պատրաստեցիր... տանջանք անբաժան։
Եւ տանջանքներով կապրես անկասկած,
Ինչպէս որ մինչև այսօր ես ապրել,
Դրսից խոցոտուած, ներսից խոցոտուած,
Մի օր անարդուած, միւս օրն առաւել...

VI.

Ի՞նչ ես կամենում դու, գոռոզ հոգի,
Մարդոց արցունքը քեզ դո՞ւր չէ գալիս,
Նեղ է քեզ համար սահմանը կեանքի...
Լուռ կաց, հանդարտուի՛ր, և ցաւ զգալիս,
Եթէ կամենաս քո ալէկոծուած
Զօրութեամբ դիպչել մարդկանց ականջին
Եւ նրանց սրտին ազդել անկասկած,
Կսկիծդ յանձնիր սրտագէտ երգչին,—
Մարդիկ ընկած են, նրանց չեն ազդում
Իմաստուն խօսքեր կեանքի հոգատար,
Եւ հարկաւոր է հոգեկան շարժում—
Հեշտալուր ձայներ—պօէտի քնար։

VII.

Դէ, թռի՛ր ինձ հետ ամենչով հրաթև,
Որպէս թռչում է կարօտած սէրը,

Մինչև կըտեսնես քեզանից ներքև
Խորին ձորերի սև անդունդները.
Եւ քո թոյլ ոտքը թող դէթ մի անգամ
Շօշափէ բարձունքն ազատ սարերի...
Աչքդ բաց արա, նայի՛ր, բարեկամ,
Ահա հին Լօռին Հայոց աշխարհի։

VIII.

Ողջոյն, վեհափառ լեռներ երկնահուպ,
Ո՞վ հրաշալիք հզօր Արարչի,
Եւ, ահա, հոգիս, ինչպէս մի ասուպ,
Թռած գալիս է ձեր գլխին հանդէպ.—
Այդ գագաթներին, որ ձիւնապսակ
Փայլատակում են ընդդէմ աստղերին,
Այդ ամպերի մէջ, որ կուտակ-կուտակ
Ծանրանում են ձեր շքեղ ուսերին.
Այդ սառն ու յստակ աղբիւրների մօտ,
Որ ապառաժից յորդառատ բղխում,
Աւազի վերայ, կայտառ, ծիծաղկոտ
Երեխի նման կրկչում են, խաղում.
Պարզ առուների դալար ափերին,
Որ սահանքաւոր իջնում են փրփրած,
Ուր որ կենսաշունչ հովը լեռնային

Մերթ վազվզում է, մերթ դզվում կամաց.
Ուր որ համասփիւռ բուրմունքը ծաղկի
Եւ ծրծմբային հոտը կայծակի
Խառնվում իրար և տարածվում են,
Խռռոչ ու ծործոր բռնում, լցնում են:

IX.

Օրհնութեան վայրեր, ուր աւոյդ կեանքի
Եւ զուարթութեան շունչն է միշտ խաղում,
Հոյակապ երկիր, որ միայն երկնքի
Բարձրութեան մէջ ես խորհուրդդ խորհում:
Ուզում եմ պատմել, թէ ինչ եմ սիրել,—
Բարձրացնել փառքը քո վսեմ անուան,
Ուզում եմ երգել և քեզ մեծարել,
Արժանի՞դ երգի և ~~խրատանութեան~~ Խրատանութեան.
Բայց թոթովանքը տպիկար լեզուի
Աստուածային չէ կարող յայտնել,
Եւ նա մնում է, որ պիտի ասուի,
Որ միմիայն քեզ է երկինքը տուել:
Մ՞խ, թէ քո ստուած հոգուն ու սրտին
Տայիր և թարգման—հրաթափ լեզու,
Քեզ մոքից հանող քո թշուառ օրդին
Քո վեհութեանը կը լինէր հատու:

X.

Դու մեղ այն ասա, շատախօս պօէտ,
Քո սիրած երկրում ի՞նչպէս են ապրում,
Թէ հաշտ են արդեօք իրանց բախտի հետ
Մարդասիրութեան լուսաւոր դարում։
—Դարձեալ սառնասիրտ յիշեցնում էք այն,
Որ համբերութիւնս մաշել է խսպառ.—
Ուզում էք լսել, թէ դեղջուկ հէգ հայն
Ինչպէս է հեծում աղքատ ու թշուառ։
Բայց ես չեմ պատմիլ նրա խրճիթում
Նոյն իսկ սեպհական աչքով տեսածը,
Թէ ոնց է նրա կեանքը դիշատում
Խիստ ու չար բախտի հրաւիրածը.
Որի կրքերը վայրենի, անասնձ
Մարել են հուրը ողկոյց սրտի,
Որ մեծարում է պոռնիկ դեղապանծ
Քան փրկութիւնը ողջ ժողովրդի...
Որի անբարիշտ վարմունքի համար
Երբէք, ոչ ուրեք ես լռելու չեմ,
Թէկուզ և նրա ձեռքից չարաչար
Պատիժ ստանամ և մահով կորչեմ։
Կրպատմեմ սակայն պատահած մի դէպք,
Հին սովորութեամբ, բայց նոր կատարուած,

Եւ դուք կիմանաք, երբ որ չըգիտէք,
Ինչպէս են ապրում երկրում իմ սիրած։

XI.

Այն ծոխ գաւառում, ուր Զաթինդաղի
Ուսերից պայծառ արևը ծագում,
Իրիկնապահին Ղարախաչ սարի
Եաւեն է շիկնած երեսը ծածկում,
Ուր որ Քօշաքար, Լալվար ու Դվալ,
Հսկայ պահնորդներ, իրանց շարքերով
Բարձրացած խրոխտ և լայնածաւալ
Հսկում են երկրին անքուն աչքերով.
Ուր հին Դեբեդը իւր վտակներով,
Ամեն մի քարի մօտից անցնելիս,
Վառուած վաղեմի յիշատակներով,
Մերթ զայրանում է, մերթ փղձկում—լալիս,
Անուշն ու Սարօն քոյր-եղբօր նման,
Սարում ու դաշտում, մանուկ օրերից
Իրար հետ սիրով, խաղով մեծացան,
Եւ շատ են քաշել իրար մաղերից։
Նրանց մայրերը հաւասար օրհնում,
Հաւասար սիրով խնամում էին,—
Մի օճաքի տակ և մի վրանում

Երեխաները մեծանում էին:
Մեծանում էին պարզ ու վայրենի,
Քոշաքար սարի քոշերի նման. . .

XII.

Այստեղ յիշեցի ես այն օրերը,
Որ անենկատելի անց կացան արագ,
Եւ աղբերաշատ, կանաչ սարերը
Ինձ երևացին միաժամանակ:
Ծանր վեհութեամբ ամպերի միջից
Նրանք նայում են ծանօթ հայեացքով,
Այնտեղ քար, ծառ, աղբիւր... ճանաչում են ինձ
Մի սիրուն օրով, սիրելի անցքով:
Եւ, անձաւներից քարաժայռերի,
Թաւուտ անտառի լռին խորքերից,
Մանուկ հատակիս ազազակների
Պարզ արձագանքը լսում եմ նորից:
Պարզիկայ դիշեր. թաղիքի վրանից,
Զմայլած սրնդի ձայնով թռչական,
Նայում եմ,—ահա երկինքն աստղալից
Կպչում է հեռու լերանց բարձրութեանն:
Ուրիշ մի դիշեր, տխուր ու խաւար,
«Գողի ու գայլի դիշեր» ահաբեր,

Եւ անքուն հովուի սասառդ, ապրարար
Աղաղակները ականջումն են դեռ։
Իսկ առաւօտեան ադմուկը բենի,—
Հաջոց, բառաչոց, խրխինջ ու գոչիւն...
Այն ադմուկի մէջ կիսավայրենի
Ինձ սիրելի է ամեն հնչիւն։
Ես այն սարերումն էի երեխուց,
Այնտեղ տարփում էր մի գոյդ սիրահար.
(Նրանցից մէկը մեռած է վագուց,
Միւսն ազօթում է մեռնելու համար)։

XIII.

Անցան տարիներ, նրանք մեծացան,
Մի օր էլ երբ որ իրար նայեցին,
(Եւ այն հայեացքը չէր սովորական)
Իրար հասկացան, բայց լուռ պահեցին։
Այն մի հայեացքով պատանի Սարօն
Գրկեց Անուշն պատկերը հոգով,
Այն ինչ գեղեցիկ Անուշը նրան
Սիրեց կուսական առաջին կրքով։
Բայց, հապա՞ տփոռս, առաջին անգամ,
Երբ մարդու սրտում զարթնում է սէրը,
Նրա հետ, իսկոյն, սատանայական,

Յայանվում են և կեանքի հոգսերը։—
Հասած Անուշին իւր ծնողները
Մօր ծնկան կողքին կապեցին կամայ,
Սարօն էլ վերցրեց իրանց շները,
Դաղանակն[1] ուսեց, ոչխարը գնաց։
Եւ այնուհետև սիրող սրտերի
Տանջուող կարօտին էլ սահման չըկար,
Օրերը նոյնպէս խիստ անտանելի
Տխուր ձանձրոյթով թուացին երկար։

XIV.

Զէ՛, ես չեմ ուզում բառերով չնչին
Խօսել սիրափառ սրտի բոցերից,
Եւ անպատում է սէրը առաջին,
Նա վեր է մարդու բոլոր խօսքերից։
Եթէ, բարեկամ, քեզ դեռ չեն այրած
Երկնքից ղարկած նետերը սիրու,
Կամ եթէ Աստծուց շնորհք չես առած
Մարդկանց սրտերը ներս թափանցելու,
Եւ դու չըգիտես թէ ինչ է սէրը,
Ինչպիսի քաղցրը ատանջանք է անհուն,

1. Դաղանակ—մահակ, հովուական ցուպ։

Արի՛, բարձրացի՛ր դէպ այն սարերը,
Ուր որ ապրում է Անուշը սիրուն։
Արի՛, որ նրա խանդով բռնկած
Սև աչքերը սև յոնքերի տակից
Մի անգամ աչքիդ ընկնէին յանկարծ,
Որ սիրտդ դողար կրքոտ հայեացքից.
Որ այն հայեացքը փարատէր խսկոյն
Այդ քո սրտամաշ տարակուսանքը,
Որ ճանաչէիր երջանկութիւնը
Ապա տանջուելով սիրէիր կեանքը.
Եւ որ ասէիր,—իրաւ, այս ծովծով
Աչքերը խլել են շողերն երկնքի,
Որ լուսաւորեն իրանց հայեացքով
Մռայլութիւնը մարդկային կեանքի։

XV.

Հողեղէն հրեշտակ, դու, որ անպատճառ
Ողեւորութեան համար ես ծնուել,
Թէ կարենայիր մեր անմխիթար
Կեանքին մի ազատ հայեացքով նայել,
Գուցէ չըհանդչէր մարդոց սրտերում
Անվերջ ապրելու սէրն ատուաձային,
Թերեւս այսքան յաւեր անպատում

Այս ժողովրդի դլխին չըդայլին.—
Քեզ հետ, քո սիրով մարդը թև առած
Կարող է թէկուզ երկինքը թռչել,
Ինչպէս առանց քեզ չքնաղ արարած,
Վիճակուած է միշտ յուսահատ կորչել:
Բայց ես ընդհատուած իմ խօսքն ասեմ թող,
Եւ դու կ'իմանաս, որ այն աչքերի
Հրապուրանքը հողի կախարդող
Հանդչում է ծովում արտասուքների:

XVI.

Ժամանակի հետ միանգամ վառուած
Սէրը զօրացաւ նորանոր զարկով,
Եւ ժամանակ էր, որ սիրահարուած
Աղջիկն ու տղան միանան կարգով:
Բայց ի՞նչ եմ ասում,—Քօշաքար սարի
Հովիւը կռօ[1] է, դնայ հօրն ասի,
Ոչ իրան համար հարսնացու ճարի
Կամ ծնողներից Անուշին ուզի.

---

1 Կռօ—լեռնականները կռօ կոչում են դաշտարնակներին, լօռեցիք մասնաւորապէս շիրակացիներին. այս բառով «անարի, վախկոտ» են հասկանում:

Կամ թէ այն ալատ լերանց հովուհին—
Սիրուն Անուշը իւր մաքուր սիրով
Չի՞ հրապուրում խանդավառ հովուին,
Եւ արժանի՞ չէ, որ փախցնեն ղօրով։

XVII.

Այսպէս է, այո՛, իգիթների մէջ,
Որ խնամախօսի քար չունեն շէմքում,
Եւ նրանց սէրը թէև միշտ անշէջ,
Սակայն լուռ է և բանտարկուած սրտում։
Թէ քաջ տղայ է՝ շնորհքը ցոյց տայ—
Սրտի սիրածին թող փախցնի տանի,
Որ և լսողը ասի, թէ՝ ահա
Մի մարդ պատկի, սիրոյ արժանի։

XVIII.

Նրանց պատերը մեծ Կուրի ափին
Խիստ հրճվում էին, երբ իրանց ալքան,
Սիրուն, սեւաթոյր նժոյգը տակին,
Անցաւ Կուր գետը արծուի նման.
Լեռնականների բանակի դիմաց
Զգեց ոսկէօղ շիկափոկ պարանն,

Բռնեց աչադեղ դատերն ալանաց
Եւ արագ հասցրեց իւր կարմիր վրանն.
Իսկ բանաստեղծը Գողթան աշխարքի
Երգ հիւսեց աշխոյժ, երգեց ու լռեց,
Բայց ժողովրդին տիրոջ արարքի
Հռչակը երկար դեռ ոգևորեց։

XIX.

Շատ օր չէ անցել, կար մի հարսանիք,
Զուարճանում էր ամբոխը գիւղի,
Սարերից իջել հովիւ պատանիք
Ադջկայ են նայում, բայց գաղտագողի։
Եւ պարից յետոյ լայն հրապարակ
Բաց արին մէջն այն հարսանքատան,
Զոփուր ղուռնաչին միաժամանակ
Սկսեց կոխի[1] ածել իւր ղուռնան։
Եւ ձայն են տալիս «քաշի՛ հա, քաշի՛...»
Եւ դուրս քաշեցին հազիւ երկուսին.
Սարօն էր մէկն, իսկ միւսն Անուշի
Հարազատ եղբայրը—գառնարած Մօսին։
Հարսանքաւորը պարապի նման

[1] Կոխ—գօտեմարտ։

Կանգնած բաժանուեց երկու բանակի,
Եւ իւրաքանչիւրն ընտրեց փահլեվան[1]
Ու ոգևորեց աղերանց մէկին։
Գոռում են, գոռում երկու բանակից,—
«Սրտապինդ կացէք, մի՛ փախէք աղերք»,
Իսկ Նորահարսի փարդի[2] քամակից
Նայում են անթիւ հարսն ու աղջկերք։
Եւ պտտվում են լայն հրապարակում
Արջերի նման երկու հովիւներ,
Իսկ ժողովուրդը դեռ աղաղակում,
Քաջալերում է «ջա՛ն փահլեվաններ»։
Եւ տաքանում են աղերքը սաստիկ,
Զուխի քղանցքը պինդ հաւաքելով
Զարկում են դեանին ձեռքերը հաստատիկ,
Որ ցամաքեցնեն քրտինքը հոդով։
Երակների մէջ կրակ է վազում,
Իսկ ականջները կարմրել են արդէն,
Կատաղի թափով իրար են հասնում,
Հէնց որտեղ որ է միմեանց կը ջարդեն...
Ընկերների մէջ օրէնք է շատ հին,

---

[1] Փահլեվան — ըմբիշ։ [2] Փարդայ—վարագոյր. Լօռու գիւղերում, երբ որ հարսանիքը լինում է մի գլխատան (մեծ սենեակի) մէջ, կանայքը տղամարդկանցից բաժանվում են մի վարագոյրով, որի ետև նստում է և նորահարսը։

Որ այսպիսի մեծ բազմութեան միջում
Զըպէտք է դեռնին զարկել ընկերին,
Այլ պէտք է անել հարկաւոր գործում։
Մոռացաւ Սարօն օրէնքն ու աշխարը,
Երբ կանանց միջին Անուշին տեսաւ.
Սիրտը սկսեց բաբախել արագ,
Աչքերն արիւնով խսկոյն լցուեցաւ.
Եւ այսպէս, մինչև անհոգ էր Մօսին,
Սարօն իւր բոլոր ոյժը հաւաքեց,
Ուջէն քաշելով[1], յանկարծ ընկերին
Գետին տապալեց ու կրծքին չոքեց։
Ամբոխը թափուեց հարայ-հրոցով,
Վեր թռչրեց երկու փահլեւաններին,
Եւ ուրախութեան աղմուկ-գոռոցով
Ցաղթողին փեսի թախտի[2] մօտ բերին։
Ցնծութեան ձայներ, ծափերի զարկից
Շարժվում են, գողում պատեր ու օճաքը,
Իսկ Նորահարսի փարդի քամակից
Նայում են, գովում հարսն ու աղջիկները։

---

[1] Ուջայ քաշելը—ախոյեանին յաղթելու հնարքներից մէկն է, որ կատարվում է ոտի ճարպիկ շարժումով (ուջայ—ազդր)։ [2] Թախտ—այստեղ գործ է ածվում գահի մտքով, որովհետև նրա վերայ նստում է Թագաւորը (Նորափեսան)։

Զայրացած Մօսին դեռ չէր հանդարտվում,
—Թող դայ, ասում էր, որ բռնենք նորից,
Թէ չէ նամարդը[1], արևս եմ երդվում,
Չի աղատուելու երբէք իմ սրից»:
Եւ թագաւորի թախտիցը Սարօն
Պարզև ստացաւ մի կարմիր խնձոր,
Իսկ Մօսին ուրախ հարսանքատանից
Դուրս գնաց խսկոյն սաստիկ վիրաւոր:

XX.

Եւ Մօսին ուրախ հարսանքատանից
Դուրս գնաց խսկոյն սաստիկ վիրաւոր.
Արիւն էր կաթում սևակնած սրտից,
Գնում էր շտապ և քայլամոլոր:
«Ամօթ քեզ Մօսի... թուք ու նախատինք..
Ամօթ քեզ նման զոված իգիթին...
Մի անունդ յիշիր, մի բոյիդ մտիկ...
Դեռ քո թիկունքը չէր տեսել դեսին...
Ի՞նչպէս վայր ընկար զու սարի նման,
Երբ որ նայում էր ողջ գիւղը կանգնած...

---

[1] Նամարդ—տմարդի, նսխատական բառերից ամենախիստն է լեռնականների մէջ:

Դո՛ւ... կո՛ւչ դաս տակին Սարոյի ծնկան,
Նրանից յետոյ երևաս կանանց...
Այս բանն եկե՞լ էր խսկի .քո ղլխին,—
Մաղրատեղ դարձար աշխարքի միջին...
Դէ մեռի՛ր էլի... դեսի՛նը մտի՛ր...
Տղայ չես լինիլ, եթէ կուլ տուիր...»
Մտմտում էր նա և տոտմները
Կրճլատայնելով մահ էր որոճում,
Յանկարծ բաց արաւ արնոտ աչքերը
Գիւղից հեռացած, անտառի միջում։

XXI.

Այն օրից սկսած Թշնամի դարձան
Երկու ընկերներն այս դէպքի համար,
Բարեկամներն շատ չարչարուեցան,
Բայց հաշտեցնելու չըղտան հնար։
Կամակոր Մօսին այլևս ինչ խելք էր,
Որ դեռ աչքը բաց, վրէժը սրտում,
Իրան հարատատ .քրոջը տեսնէր
Անհաշտ Թշնամու—Սարոյի գրկում։
Գուցէ զիշերս էլ խանչալը հանած
Քրոջն սպառնում է նա, թէ կըսպանի,
Եթէ Սարոյի սիրով պահպանած

Անունը իրան սրտից չըՀանի։
Ո՞վ գիտէ, դուցէ Հէնց այս գիշեր էլ
Թշնամիները անՀաշտ ու յամառ
Մէկմէկու Հօտից ոչխար են քշել
Միմիանցից վրէժ առնելու Համար։
Կարող է նաև պատահել յաճախ,
Ու մէկի դէզը—արդիւնքը Հնձի,
Գիշերուայ ժամին յանկարծ կրակուած,
Երկնահաս բոցով ասաղերը խանձի։

XXII.

Արդէն վառուած է սէրը կուսական
Եւ տոչորում է մատաղ սրտերը,
Էլ չի կարելի տան տեղութեան
Շնչով Հանդցնել նորա բոցերը։
Իսկ եթէ մահը Հասնի վաղաժամ,
Նա դարձեալ կապրի պօէտի մտքում,
Եւ երկար օրեր վառ ու անթարշամ
Կըմնայ նորա սիրտ այրող երգում։
Եւ կըգան օրեր, երբ երջանկութիւնը
Կըթագաւորի աշխարքի վերայ,
Ցաւ ու տանջանքի երգչի անունը
Թող այնուՀետև երկրից վերանայ.—

Տխուր ձայնները նորա պատմութեան
Զմռայլեցնեն զուարթ զէմքերը,
Եւ թող բախտաւոր մարդիկ չիմանան,
Թէ մի օր այսպէս անբախտ էր սէրը։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.

XXIII.

Դեռ ևս զիշեր կայ. անուշիկ քնով
Քնած է զիւղը անօսր խաւարում,
Եւ կախարդական տխուր ձայներով
Օրօրք է տալիս Դեբեղը ձորում։
Նիրհում են ասաղերն, և ասահեղաղարդ
Երկինքը ջինջ է, թափանցիկ, անհուն,
Կապոյտ եթերքում սահում է հանդարտ
Թմրած ու դանդաղ լուսինը անքուն.
Եւ, Ղարախաչի կատարին հասած,
Յանկարծ նայելով մութն արևելքին,
Լուսատուը տխուր,—ահից դալկացած
Շտապեց թաղչել սարի քամակին։

XIV.

Այս խորհրդաւոր ժամին գիշերուան,
Երբ բաժանվում է լոյսը խաւարից
Եւ քնած երկրին հաւը մի բերան
Լուսոյ աւետիք առաց իւր Թաւից,
Գիւղի մի ծայրում մի բան անց կացաւ,—
Շնները խմբով սասսիկ հաչեցին,
Միասին մի խուլ «հէյ հէյ» լսուեցաւ.
Եւ չէր լուսացել, հաւար կանչեցին։

XXV.

Դեռ գորշ ամպերը վաղ առաւօտեան
Նոր են ջուր խմած ձորից բարձրանում
Քարոտ Թիկունքից Զաթինդաղ լերան,
Նոր է արևը պռունգը[1] հանում,
Գիւղացը մօտիկ քարափի գլխին
Մի խումբ իգիթներ, տհա զայրացած,
Հրացանները բռնած ձեռքներին,
Խօսում են ասք-ասք և նայում են ցած։

[1] Պռունգ—շուրջ, ծայր.

Գիւղումն ապմուկ է և իրարանցում,
Կըաներներին են կանայք հաւաքուած,
Տղերքը դէպի քարափն են վազում
Հրացանների կիսերից բռնած։

XXVI.

Եկաւ վիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց խռոված ապերանց միջին,
Մատը դէպ ձորը մեկնելով հանդարտ
Այսպէս խօսեցաւ զօր տալով չիբխին[1].—
«Երբ որ հաջեցին շներն այս գիշեր,—
Վազուց էր անցել գիշերուան կէսը,—
Երկու մարդկային սև կերպարանքներ
Հողերովն[2] եկան, ցած իջան դէսը»։
Այս որ լսեցին դէս ու դէն ցրուած
Տղերքը ձեռով ձորը նեռս մտան,
Եւ մըտի տակին, ճամբիցը ծռուած
Երկու մարդու թարմ ոտնատեղ գտան։
—«Այն անզգամինն է այս ոտնատեղը,
Տեսնում է.ք, ինչպէս հողում նամակուշտ

---

1 Չիբուխ—ծխաքարշ։ 2 Հողեր—գիւղերում առհասարակ կոչվում են վարելահողերը, արտատեղերը։

Խորն է գնացել նրա պճեղը,
Իսկ տրխաւորը Սարոյինն անշուշա»։

XXVII.

Ամբողջ մի ամիս խումբը ղենավառ
Սարեր ու ձորեր ոտնատակ տուեց
Հովիւ Սարոյին գտնելու համար,
Որ սարիցն եկաւ Անուշին փախցրեց։
Մի ամսից յետոյ վերադարձաւ տուն
Գովելով նրա արարքը ճարպիկ,—
«Հալալ է աղին,—ա՛յ իղիթութիւն,
Ահա, թէ ինչպէս կըփախցնեն աղջիկ։»
Մենակ Անուշի եղբայրը—Մօսին
Չըվերադարձաւ, և երդուել էր նա,
Որ, ուր որ լինին, նրանց միասին
Գտնի կոտորի, սիրտը հովանայ։

XXVIII.

Եւ գիւղացին երդ յօրինեց,
Գովեց հովիւին ու եարին,
Եւ երգելով տարտնջայնեց
Այս արկածը սիրային։

Երդեց սիրոյ հալածանքը
Եւ արարքը սիրողի,
Եւ կամապաշտ եղբօր ջանքը,
Բարկութիւնը անտեղի։
Երդեց հայրը, երդեց որդին,
Իրան տանը և հանդուցեալ...։
Եւ ամեն անոյք իւր յետնորդին
Նա երդով է աւանդում։

XXIX.

Անցաւ մի ամիսն. և ահա մի օր
Բաղաւորների հետ, իրիկնապահին
Անուշը եկաւ ախտը, ղլխակոր.
Հարևանութիւնն հաւաքուեց ղլխին։
Աստուած խնայեց.—Նրա եղբայրը
Դեռ ևս հանգիստ չէր վերադարձել,
Իսկ խոժոռատեսմ ալևոր հայրը
Սկսեց փրփրած թքել-անիծել.—
«Դուրս գնա՛, կորի՛ր, ա՛յ լերը, անդգամ,
Սև ու սուդ լինի թագ ու պսակդ,
Կորի՛ր, չերևաս աչքիս միս անգամ,
Գեսինը մանի երկար հասակդ...
Տեսար, որ նրան տառում է Մօսին,

Տեսար չեն ուզում նրան հեռնումերդ,
Դու քանի՞ զուրխ ունես քո ուսին,
Որ վեր ես կենում փախչում նրա հետ...»
Խռնուած գիւղացիք կառուրից ինչան
Հանգստացնելու բարկութիւնը հօր,
Յայտնուեց նոյնպէս գիւղի քահանան,
Մի պատկառելի հսկայ ալեւոր։
Անուշը կանանց խմբի մէջ ընկած
Դեռ հեկեկում էր, լալիս դառնագին,
Եւ ժողովուրդը տանից դուրս գնաց—
Խոստովանելոյն աչքերն Անուշին։

XXX.

Մի կարճ քարոզից յետոյ քահանան
Սիրուն Անուշին յորդորեց այսպէս,—
«Արդեօք ճշմարիտ սիրո՞ւմ ես նրան,
Թէ խաբից զօրով փախցրեց նա քեզ.
Մի վախիր, ասա, եթէ սիրում ես,
Զեզ կըպահեմ, միամիտ մնա,
Եթէ չես սիրում ինձ յայտնիր նոյնպէս,
Որ յանցաւորը պատիժն ստանայ։»
Երեսը ծածկած սատիկ ամօթից,
Լցուած աչքերը գետին խոնարհած,

Անուշը կամաց, ձեռքերի տակից,
Խօսաց գողալով, իրան կորցրած.
«Իմ կամքով փախայ... սիրում եմ, տէրտէր...
Չէ՞ որ ասացիր մեզ կըպատկես. . .»
—Այն ո՞ւմ էր արդեօք, տեսէք ի՞նչ մարդ էր,
Որ դուրսը յանկարծ ապմեց այսպէս.
Դուռը շառաչեց, մարդիք խուժեցին,
Եւ յառաջ անցաւ մի թուխ պատանի,
Գունատուած հարցրեց գիւղացիներին—
«Այստե՞ղ չըհասաւ ձայնն հրայանի.»
Զարհուրեց ամբոխն և աղաղակեց
Խառըն ձայներով, ի՞նչ եղաւ ձորում...
Ի՞նչ հրայան էր... ինչո՞ւ աբրաքեց...
Շո՛ւտ արա, ասա՛, էլ ինչ ես լռում...»
Պատանին խօսաց—«Հէնց այսօր ծէ՛քին
Մօսին Սարոյին ձորում պատահեց...
Գնտակը դիպաւ Սարոյի կրծքին,
Թիկունքիցն անցաւ.» ասաց ու լռեց:
Կարծես մի կրծքից ողջ միաբերան
Բացականչեցին ձայնով արտմութեան,
«Ա՜յ, ափսոս իղիթ, որ կորաւ իղուր...
Անո՜ւշ, Անո՜ւշ, ջուր հասցրէ՛ք, ջո՜ւր...»

XXXI.

Ինչպէս մի հեղեղ վեր կենալ յանկարծ
Երկնքի մթնած ամպերից ի՛ջնէր,
Ինչպէս փոթորիկ սասսիկ սրընթաց,
Գիւղից սլացան մի խումբ կարիճներ։
Ցաւից տաքացած ոչինչ չեն հարցնում,
Թռչում են, որպէս ահից հալածուած
Եւ նրանց առջև ահռելի բացվում,
Թշնում է ձորը արիւնով լցուած։
Նրանց եաւից արըմբարըմբալով,
Ալեոր միրքով գնում է ծերը,
Ոտքերը ս�-սուր քարերին տալով,
Շուտ-շուտ սրբելով ջրոտ աչքերը։
Ծերունու հոգին ալեկոծում է,
Արդէն կատարուած դէպքը յաւալի
Եւ դառն տղէտը, որ սպասում է,—
Վրէժխնդրութիւնն անխուսափելի...։
Գիւղը դատարկուեց մի ակնթարթում,
Քարափի գլխին կանգնեց անհամբեր.
Լռեց, սրտատրոփ ականջ են դնում,
Նայում են ներքև. ձայն չէ գալիս դեռ...
Միայն Զորագեան է անդնդում յուզուած
Խլաձայն ողբով վազում դէպի ցած։

XXXII.

Եւ մարդասպանը դուրս կկաւ ձորից.
Մոլոր է յաղթական նրա քայլուածքը,
Սարսափ է ընկնում արնոտ աչքերից
Եւ խառնուած է հպարտ հայեացքը:
Առանց նայելու մարդկանց երեսին,
Առանց խօսալու, սեւակնած, դաժան,
Մօտեցաւ սրահին, կախ տուաց սնին
Սև հրացանը սև օձի նման:
Պապանձուեց նոյնպէս ամբոխը մեխուած,
Ոչոք ծպլտալ չի համարձակվում,
Միմիայն մէկը անզուսպ կատաղած
Աղաղակում է, երեսը պոկում:
Մեռած իգիթի ծեր մայրիկն է նա,
Հաւար է կանչում, բարձրաձայն լալիս.
Տարաբախտ ծնող, վազում է ահա,
Ձորիցն է նորա դուռոցը դալիս:

XXXIII.

Սգաւոր կանայք նորա եաւից
«Հարա՜յ» կանչելով ձորը վազեցին,

Իրանց կորցրածն էլ յիշելով նորից
Դիակի շուրջը կարգով շարուեցին։
Իգիթին վայել սրտառուչ ողբով
Լաց ու կոծ արին ձէն-ձէնի տուած,
Տղերքն էլ տրտում, կորացրած գլխով
Մնացին մօտիկ քարերին նստած։
Ողբացին անշունչ դիակի վերայ
Անտէր մնացած ոչխարի մասին,
Անսիրտ անէծքով յիշեցին նորա
Անճար մնացած խեղճ եարի մասին.
Եւ նրա մասին, որ ընկերները
Հանդը գնալիս Սարօ կըկանչեն,
Որ սարից փախած սոված շները
Պիտի կտերը ոռնան, կըլանչեն։
Ծանրը չոմբախը, գլուխը մեխած,
Օճաղքում դրած պիտի մրոտի,
Երկայն խանչալը պատիցը կախած,
Պատենում մնայ և ժանգը պատի.
Որ հով սարերի սովորած նանը
Էլ սար չի գնալ առանց Սարոյի,
Սև շորեր հագած կընստի տանը,
Տխած օրերը միտը կըբերի...
Եւ իւրաքանչիւր յիշողութիւնը
Կարատում էին սիրտը խեղճ նանի,

Եւ աղաչում էր վշտալի կինը—
Մի անգամ խօսայ, աչքը բաց անի.
Բայց չէին բացվում որդու աչքերը
Իսկ շրթունքները չորացել էին,
Նրանց արանքից բաց ատամները
Սիպտակ շարքերով երևում էին։
Եւ ողջ մայրական անխելք ու տիար
Աղաչանքներն ու հեկեկանքը
Անկարող եղան վերստին բառնալ
Ցաւիտեան դրուած մահու փականքը։
Ապա կատաղած յանդուգն անհծքով
Նա յարձակուեցաւ երկնքի դիմաց,—
Եւ հայհոյում էր և կուրծքը կոծում.
Եւ ողբում էին ձէն ձէնի առած։
Գիշերը հատաւ, ատատկացաւ մութը,
Եւ նուաղեցան նրանց ձայները,
Բոլորը լռեց, մենակ Դեբեղը
Անդուլ սգում էր նաև գիշերը։

Սգւոր գեղը—
Ծեր Դեբեղը,
Սիրտը քրքրած,
Ջուրը փրփրած,
Քարուտ ափին—
Լեռ քարափին

Դեռ ծեծում է,
Հեծեծում է։

XXXIV.

Արդէն մի քանի օրեր են անցել,
Զորումն ընկած է դիակը հովւի,
Ընկած է դեռնին, անթաղ է մնացել.
Եւ չի յամաքում աչքը սգաւորի։
Իգիթը անթաղ ընկած է ձորում.
Էլ չի տեսնելու նա հանդստարան,—
Հայրական դիւղին սարսափ է տիրում,
Բոլոր դիւղացիք մերժում են նրան։—
Մի դեղնաթիկունք ճերմակ ձիաւոր
Գիշերն երաղում յայտնել է մէկին,
Որ զգուշանան Աստծոյ յատուցից—
Գիւղը չբերեն այն աւազակին։

XXXV.

Եւ մի քանի ընկեր տղերք
Դերեզմ ճոխ ափերին
Փոս փորեցին ու սրտաբեկ
Ամփոփեցին հովւի դին։

Ծաղիկները այս հանդիսին
Բուրմունք տուին դիւրեկան,
Զորագեան էլ ահեղաձայն
Երգեց վսեմ շարական.
Եւ աղերքը տխուր ու լուռ
Վերապարձան դարձեալ տուն,
Զորում թողած մի սև բոլոր—
Մի դերեզման անանուն։

XXXVI.

Տխուր ղրոյցը տխրաբեր անցքի
Այստեղ է մարդկանց համար վերջանում,
Սակայն զգայուն սիրտը պօէտի
Տակաւին ուրիշ վիշտ է վրդովում։
Եւ ի՞նչ.—մի սուգ է մեռելին բաժին
Եւ մի ողորմի, նրանից աւել,
Թէ չի մոռացվում, և սրտիդ միջին
Կարող ես նրան յաւիտեան պահել.
Բայց և նրա հետ, մոքից չըհանես,
Նայիր այն տեղին ուր տպրել է նա,
Տես ում է թողել, ումից բաժանուեց,
Եւ ով է այնտեղ չարչարվում հիմայ։—

XXXVII.

Ինչո՞ւ ես, ո՛վ կոյս, դու այդքան տրտում։
Այդ ինչ թախիծ է քո դէմքը պատում,
Կամ ինչ նախատինք ճակատդ ամօթխած
կորացնում է ցած։
Ինչո՞ւ ես, ո՛վ կոյս, այդպէս անտարբեր,
Երբոր քո սիրով բիւրաւոր սրտեր
Վառուած ճգնում են ոտքերիդ փարել,
չըզիտե՞ս սիրել...
Ահա գարունը, ծաղկունքը բացուած,
Ի՞նչու քո սիրտը մնում է փակուած
Եւ քո ժպիտը չէ բացվում, ո՛վ կոյս,
որպէս արշալոյս։
Ինչո՞ւ ցամաքած շրթունքդ ոչ սէր
Այլ մրմնջում են մահու աղօթքներ,
Թողնում է դէմքիդ արտօսրից այրուած
վարդը նորաբաց։
Տխուր աչքերդ, որ մեղ չեն նայում,
Արդեօք ո՞ր կրկրում ինչ են փայփայում—
Վաղեմի ցնորք... կարօտած պատկե՞ր...
թէ ուրիշ—նոր սէր...
Ի՞նչ ես մոռացում այդպէս ուշաբարձ
Եւ զարհուրելի ծիծաղում յանկարծ...

Ինչու՞ ես լալիս... այդ ո՞ւր ես գնում...
Ի՞նչ ես որոնում...

XXXVIII.

Անդուլի վըշվշում է
Պղտոր ջուրը Դեբեդի,
Նրա ափին կանչում է
Անշուք շերիմն իգիթի։
Եւ այն բոլոր ծաղկունքն ամՃած
Նորա ըղձերն են թաղած,
Իւր նորահաս հարսի աչաց
Արտասուքով ողողած։
Եւ հոսում են գիշեր-ցերեկ
Արցունքները հեգ հարսի,
Բայց անտարբեր ազան երբէք
Չի երևում... մխիթարի։
Վշվշում է գետը—վո՜ւշ, վո՜ւշ,
Եւ յորձանք է տալիս յորդ,
Եւ կանչում է «արի՜ Անուշ,
Արի տանեմ հարիպ մնա»։

1890 թ.

ԸԽԹԱՄԱՐ.[1]

(Աղգային աւանդութիւն.)

.....

Ծիծաղախիտ Վանայ ծովի
Փոքրիկ գիւղից առափնեայ
Ծովն է մնում գաղտագողի
Ամեն գիշեր մի տղայ։

Ծովն է մնում առանց նաւակ,
Բազուկներով առնայի
Ջուրը ճեղքում, լող է տալիս
Դէպի կղզին գիմացի։

---

[1] Աւանդութիւնը լսել եմ պ. Տ. Փիրումեանից, որ մի քանի տարի ապրել է Վան։

Խաւար կղզուց պարզ ու պայծառ
Մի լոյս կանչում է նրան,—
Մի վառ փարոս նրա համար,
Զբոսելորի որ ճամբան։

Ծփում է ծովն ալեծածան—
Ծփում է սիրտը տըղի,
Գոռում է ծովն ահեղաձայն—
Նա կռվում է կատաղի։

Ոչ մի վտանգ նա չի հարցրել
Ոչ մի դիշեր մթնադին,
Միայն ճգնում է շուտով հասնել
Երևացող կըրակին։

Սիրուն Թամարն ամեն դիշեր
Այնպէս կրակ է անում
Եւ սպասում է անհամբեր
Այնտեղ մոտիկ դարանում։

Ծփում է ծովն ալեծածան—
Ծփում է սիրտը տըղի,
Գոռում է ծովն ահեղաձայն—
Նա կռվում է կատաղի։

Եւ Թամարը սրտաբորվի
Արդէն լսում է մօտիկ
Ջրի ճեղփիւն, և ողջ մարմնով
Խանդից այրվում է սաստիկ։

Լռեց յանկարծ. և ծովափին
Երևեցաւ մի ստուեր. . .
Ահա և նա. . . իրար գտան. . .
Կասկածաւոր լուր գիշեր։

Միայն ալիքը Վանայ ծովի
Մեղմիկ գիպչում ափերքին,
Հրրհրրելով հեռանում են
Շշունչներով անմեկին։

Նրանք կարծես փսփսում են. . .
Եւ աստղերը կամարից
Միաբերան բամբասում են
Լիրբ, անամօթ Թամարից. . .

Բամբասում են կուսի սրտում.
Եւ դարձեալ մութ գիշերով
Մէկը խաւար ծոփն է մտնում
Միւսը ահից դողալով

Ծունկ է չոքում լուռ ծովեզերին,
Եւ ականջը խոնարհած,
Հեռուում է ջրի ձայնին,
Որ հեռանում է կամաց. . .

Միւս գիշերը, նոյն ժամանակ,
Էլ նոյն կրակն է վառվում,
Եւ կրակի շուրջը դատարկ
Էլ նոյն անցքն է կատարվում։

Բայց Թամարի հօր հարևան
Մի քանի մարդ չարասէր
Նրանց գաղտնիքը խմացան,
Եւ ամպամած մի գիշեր

Լոյսը հանգցրին. լողորդն յոգնած
Մոլորուեցաւ սև ծովում,
Երբոր նայեց, տեսաւ հանգած,
Փարոսն էլ չի երևում։

Լոյսը հանգցրին չար գիւղացիք
Եւ կանգնած են լուռ ու մունջ.
Դէպի ափերն այն ուղղաձիգ
Հեռուից հողմը դառնաչունչ

Բերում է ձայն կիսամոր—
«Ա՛խ թամա՛ր...»

Մօտ է ձայնը, խօլ խաւարում,
Ժայռերի տակ սեպացած,
Ուր ամեհի ծովն է գոռում,
Մերթ կորչում է խլացած,
Մերթ լսվում է ուժասպառ—
«Ա՛խ թամա՛ր...»

Առաւօտեան ծովը ծփաց—
Ափը ձգեց մի դիակ.
Նրա դէմքը այլանդակուած,
Կարծես, մեռած ժամանակ
Մրմնջում էր նա անբարբառ.—
«Ա՛խ թամա՛ր...»

Այն օրուանից դրա համար
Կղզին կոչուեց «Ախթամար»:

1891 թ. դեկտ. 31.

ՄԵՐԹԱԾ ՕՐԻՆԿ

I.

Բարձրագիր լանջում բարձր սարերի
Աղօթք է անում լուռ կանգնած մենակ
Հին յիշատակը հին հին դարերի—
Քրիստոնէից միանձանց մի վանք։
Նրա սրբածայր գմբէթը քարեայ
Բարձրանում է վեր—դէպի երկինքը,
Խաչակնքելով աշխարքի վերայ
Օրհնում է մշակի արդար քրտինքը։
Այնտեղ խստակեաց միաբանութիւն
Ճգնում է միաքը աղօթքի տուած,
Անհաղորդ երկրի վայելքին ունայն,
Մինչև որ իւր մօտ կը կանչէ Աստուած։

Զեն լսվում երբէք սուրբ Հայրերի մօտ
Մարդոց խնջոյքի ուրախ երգերը,
Եւ ոչ կանայի Հայեացքը խանդոտ
Ցուզում է մեղքով խաղաղ սրտերը։

II

Երեք օր առաջ վաղ առաւօտեան
Ցամբրնթաց մի սայլ մօտեցաւ վանքին.—
Հեռու կողմերից ուխտաւորք եկան
Երկրպագելու սրբոց մասունքին։
Եւ զզրգալով բարեպաշտ մարդկանց
Առջև բացուեցան դռներն Աստծոյ տան,
Եւ մի ահաւոր երկիւղով լցուած,
Խաչակնքելով նրանք ներս մտան։
Սուրբ կամարները, սեւացած ոսկէն,
Մի անդամ դարձեալ ծածկուեցան ծխով.
Ծխի մէջ վառուող մոմերի առջև
Ծունկ չոքած ազօթք արին երկիւղով։
Զոհը զինեցին և բաժանեցին,
Ապա սրբազան նուէրներ տարան
Այն ազօթարար միաբաններին.—
Մեղքի թողութիւն, օրհնութիւն առան։
Բայց կատարուեցաւ այլ մեծախորհուրդ

Ուխտ և ողջակէզ կեանքի հաշտութեան,
Փրկեց ակներև մահից մի հողի,
Որ պիտի անմեղ կորչէր յաւիտեան։
Ոչ արիւն թափուեց, ոչ հուր բարձրացաւ,
Ոչ տեսանելի կանգնեցաւ սեղան,
Հոգիները միայն անձայն խօսեցան—
Վերածնուեցաւ մատաղ աբեղան.
Եւ մաշուած կրծքում կրքերը մարած
Աւելի սաստիկ եռացին նորից,
Իսկ այն ընտանիքն, ուխտը կատարած,
Դուրս գնաց արդէն վանքի դռներից։

III.

Մարգոյ մեղքով լի շէներից հեռու,
Սուրբ անապատը գիշերուայ մթնում,
Ինչպէս մի հսկայ, ահռելի ուրու,
Ահա կանգնած է ահաւոր, արտում։
Նրա խցերից մէկում միայնակ
Մի երիտասարդ, ժժգոյն, դալկահար,
Ձիթի ճրագի աղօթ լուսի տակ,
Անկողնում անքուն տանջվում էր երկար։
Հաղիւ հեռացան յախուռն մտքերը,
Որ քունն աչքերին մօտ չէին թողնում,

Հապիւ ծանրացան արտեւանունքները—
Քնեց աբեղան իւր կոշտ անկողնում,
Եւ յանկարծ կանգնեց նրա գլխի մօտ
Լուսեղէն մարմնով մի կոյս երկնածին,
Կարեկցութեամբ լի, բայց սաստիկ կրքոտ.
Աշխոյժ հայեացքով նայեց քնածին:
Նայում էր առ ժամ և կամաց-կամաց
Հասուն, լի կուրծքը ուռչում—իջնում էր,
Կարծես՝ երեսին մեղմածուփ ալեաց
Ճերմակ փրփուրը խաղալիս լինէր:
Սպա շնորհալի և խիստ հեղանաղ
Շարժուածքով ձիուն մէջքը խոնարհեց,
Եւ տաք համբոյրով վարդերանդ շրթանց
Քնածի ախուր ճակատը այրեց:
Զարթնեց աբեղան, և զգաց հոգում
Մի ցաւ, որ սաստիկ տանջում էր իրան.
Այն ինչ այցելու ոգին երկնքում
Փայլատակում էր մի ասպի նման:
Դուրս նայեց տեսաւ նորեկ արևը
Երկնքի ծայրը հրկէզ էր ձգել,
Նայեց աշխարքին, նայեց վերևը,
Եւ ուզեց խակոյն բոլորը գրկել...

IV.

Փոխուեցաւ այսպէս վանականն անմեղ,—
Իւր խուցը դարձաւ առաւել նեղլիկ,
Եւ մեղմ աղօթքի անդորրութեան տեղ
Յայտնուեց հոգում անծանօթ մրրիկ։
Ո՞վ զարմանք, արդէն սիրելի սրտով
Մի գիշերուայ մէջ կարօտել էր նա,
Եւ ափսոսում էր, թէ ինչու շուտով
Գնացին վանքի հիւրերն երեկուայ։
Կարօտել էր նա. և նրա աչքին,
Քաւութեան ձերմակ շապիկը հագին
Միշտ երևում էր այն գերպատանի
Վայելչահասակ դուստրը գեղանի։—
Երևում էր նա գլխակոր ջրքած
Լուռ աղօթելիս սեղանի առաջ,
Կամ այստեղ նստած, կամ այնտեղ կանգնած
Թախծալի, քնքշշ դէմքով սիրատանջ։
Ամենայն անգամ նորա տեղերին
Մօտիկ գնալիս, կամ թէ կանգնելիս
Ծնկներն ու սիրտը դողդողում էին,
Եւ մարմնին ախորժ թմբիր էր գալիս։
Երկար ժամերով քարացած—անշարժ
Մի տեղ մնում էր նստած գլխաքարշ—

Ապրում էր մոքում երազած օրով,
Եւ ցնորմունքից ուշաբերուելով
Ցաձախ անհանգիստ նա չարչարվում էր,
Լալիս էր ծածուկ, վանքից կորչում էր,
Եւ կատաղում էր, որ մի մարդ չըկար
Իւր ցաւն սփոփէր, կամ դէթ հասկանար...

V.

Արդէն հրեղէն գունդն արեգակի
Ուժասպառ, յոգնած դէպի մայր թեքուեց.
Փուլ եկաւ դարձեալ սիրան աբեղայի—
Գիշեր է հասնում. նա տրտում կրկնց.—

«Արևը թռաւ.
Թռչունները,
Փայլուն շողերը.
Խաւար գիշերը
Ծանրացաւ ահա
Դաշտերի վերայ:
Գերին արևի
Գլուխը դէպի
Արևմուտ ծռած
Մնաց տալարած:
Սպասում է նա,

Թէ երբ կերևայ
Երկնակամարից
Արևը նորից։
—Ա՛խ, շուտով բացուիր,
Արև կենսաձիր.
Գուրգուրիր կրկին
Արևածաղկին։

«Հեռացար և դու,
Անցայտ սիրատու.
Բոցոտ հայեացքով
Լցրիր կըրակով
Սիրտս վշտահար,
Եւ քեզ հետ տարար
Ուշքս ու միտքս...
Մթնեց երկինքս.
Ես էլ ծաղկի պէս
Սպասում եմ քեզ.—
Ահա շուարած
Գլուխս ծռած,
Ես էլ եմ նայում,
Քո ճամբէն պահում.
Ծաղի՛ր դու նաև,
Իմ հոգուս արև։

VI.

Գիշերուայ մթնում նեղ լուսամուտից
Երևում է լոյսն աղօտ լամպարի.
Իւր անձուկ խցում նստած է հանգիստ
Ժիր վերակացուն հին սրբավայրի։
Կծղել են երկայն մազ ու միրուքը
Այն խստակրօն ծեր վանականի,
Հանգել են աչքերն, և հէգ ծերուկը
Զուսնի երևին մի գիծ կենդանի։
Սրդէն չորացած երկայն մատներով
Իւր սև համբիչի հատերն է քաշում,
Եւ խաղաղութեամբ, դրախտի յուսով
Կեանքի մնացած ժամերը հաշվում։
Մահի հարուածից նա չի սարսափում,
Եւ բան չի խլում մահը նրանից,—
Երկրի հետ նրան ոչինչ չի կապում,
Ողջ սպասում է նա դերեզմանից։

VII.

Փոքրիկ զոնակը զզայշ բացուեցաւ.
Մի մեռելատիպ, բայց երիտասարդ,

Աչքերը վառուած սեւաշոր մտաւ.
Եւ հարցրեց նրան ծերուկը հանդարտ.—

ԾԵՐ ՎԱՆԱՀԱՅՐԸ.

Ի՞նչ ունես, որդեակ։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱԲԵՂԱՆ.

Հայրիկ, ներիր ինձ,
Այսպէս տարուժամ որ քեզ մօտ եկայ.
Սիրտս ուզում է դուրս թռչել տեղից...
Այլ ես համբերել չըկարողացայ...

ՎԱՆԱՀԱՅՐԸ.

Համբերութիւն տայ Թող Բարձրեալը քեզ.
Բայց ինչո՞ւ համար յուզուած ես այդպէս։

ԱԲԵՂԱՆ.

Ինձ ասա, հայր սուրբ, դաղանիքը կենաց
Արդեօք օրէնք է Աստծուց սահմանուած...

ՎԱՆԱՀԱՅՐԸ (ընդհատելով).

Այո, Տէր Աստուած աշխարքին, որդեակ,
Ապրելու համար տուել է օրէնք,
Եւ մենք սրբութեամբ, ինչպէս օրինակ,
Այն օրէնքները պիտի կատարենք։

ԱԲԵՂԱՆ.

Կատարենք, հայր սուրբ... ապա, երբ որ կայ,
Խնդրում եմ Տիրոջ այն սուրբ օրէնքով,
Որով ապրում են մարդիկը Նորա,
Նաև մարդկային իմ իրաւունքով...

ՎԱՆԱՀԱՅՐԸ (ընդհատելով).

Էլ ի՞նչ իրաւունք... դու պաշտօնեայ ես,
Մի սպասաւոր Աստծոյ տանը,
Պիտի տաճարի սեղանին նայես,
Ազօթես, ճգնես. այս է քո բանը.
Եւ դրա համար չես մնալ անմատ—
Բոլորի վարձը այնտեղ կ'ստանաս:

ԱԲԵՂԱՆ.

Ես ծառայում եմ, և իմ պաշտօնում,
Տեսնում ես, ահա, պակասաւոր չեմ.
Երկնքի վարձը չեմ արհամարում,
Բայց մի՞թէ երկրում ես պիտի կորչեմ...

ՎԱՆԱՀԱՅՐԸ.

Մի մաղ չի կորչել գլխիդ մաղերից.
Մի՛ անուշանիր սրտումդ կասկած:

ԱԲԵՂԱՆ.

Սակայն չէ՞ որ մեզ այս լեռ. քարերի
Ճգնութեան համար չըստեղծեց Աստուած։
Իմ օրերն այստեղ տխուր են անցնում.
Վառվում է սրտումս հուրը կենսական,
Ինչո՞ւ է.ք նրան դուք ջրով հանգցնում
Մահաշունչ ցրկում խուլ առանձնութեան.
Կարօտ է հոգիս, թռչում է հրաթև
Այս մենաստանի բարձրը պարսպից,
Չեմ կարող մնալ ես այսուհետև,
Եւ երբէ.ք, մինչդեռ ցրկուած եմ կեանքից...

ՎԱՆԱՀԱՅՐԸ.

Այստեղ է կեանքը, այս սուրբ յարկի տակ.
Աղօթի՛ր, ճգնի՛ր, կըդտնես, որդեակ։

ԱԲԵՂԱՆ.

Չէ՛, չեմ դտնում, հայր, աղօթքների մէջ
Եւ ոչ հոգեբուխ մեղեդիների,
Դարձեալ մնում է նա սասսիկ մի տենչ,
Մի տենչ անկասար, անհասկանալի.
Սարսափում եմ ես.—մօտ է վտանգը—
Իմ մահն ինձանից մօտիկ է, մօտիկ.

Այստեղ չեմ գտնում մխիթարանքը,
Որով շնչում են, ապրում են մարդիկ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ.

Ուրեմն չըկայ, ինչ որ ուզում ես,
Եւ այդ ցնորք է, կամ փորձութիւնով
Նզովեալ չարը խաբբարում է քեզ
Հոգին կործանող իւր պատրանքներով։

ԱԲԵՂԱՆ.

Եթէ նա չըկայ, ոչինչ չեմ յարգում,
Ատում եմ և ինձ, իմ անձս միայնակ,
Ոչինչ չեմ գտնում այլ էս աշխարքում—
Լոկ խաբէութիւն և անմիտ ատելանք.—
Թող այնուհետև քանդուի նա իսպառ,
Նրա երեսին էլ կեանք չըծագիլի,
Թող մեռնեն մարդիկ, թող ուտեն իրար...
Ես էլ չեմ խղճում այստեղ ոչ ոքի։
Սակայն չէ, նա կայ. անբիծ ալեւոր,
Կուրծքդ երեւի դեռ չէ եռացել,
Մենակ է ածել հատակդ բոլոր
Եւ առանց կեանքի հանդել, ծերացել.
Բայց երբ սոսկալի առանձնութեան մէջ
Ինձ պաշարում է սարսափը մահու

Եւ ունայնութեան մաքերն հոգեմաշ
Ինձ երևում են տխուր, ահարկու,
Շուրջս չեմ դանում փրկութեան նշան։
Իսկ մահը, կարծես, չոքում է կրծքիս,
Միմիայն խորտիսս, խաւար գերեզման,
Միմիայն զժոխքն է երևում աչքիս,
Նա այն ժամանակ վրայ է հասնում
Ինչպէս լուսաւոր շողն արևելուսի,
Փարատում է հոգուս մռայլութիւնը,
Վանում մահաշունչ մաքերն մեկուսի,
Կեանքի ջերմութեամբ լցվում է սիրտս...
Եւ ես զգում եմ, որ այն քաղցր ու նուրբ
Զգացմունքով է կենդանի մարդս.
Բայց ափսոս, որ դու չըգիտես, հայր սուրբ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ.

Այն սուրբ հոգին է, կամ մի սուրբ հրեշտակ,
Որ այցելում է, ո՛վ արժանաւորդ,
Եւ կեանքի մասին ասուածաբնակ
Այս սուրբ տաճարում քեզ տալիս հաղորդ։

ԱԲԵՂԱՆ.

Օ՜, չէ՛, չէ, հայր սուրբ, նա չէ ինքանում.
Ինչպէս սուրբ հոգին, Աստծոյ խորանից,

Եւ ոչ հրեշտակի պաշտօն է տանում,
Բայց ես շատ հեռու, հեռու եմ նրանից։
Ա՜խ, նա պակաս է, նա չըկայ այստեղ,
Մերժած է անդամ նրա անունը,
Եւ ահա դատարկ, դատարկ է ահեղ
Օրէնքի պաշտպան Աստուծոյ տունը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ.

Այդ խաղաղութեան թշնամին է չար,
Որ միշտ հեռու է ահիցը վանքի։

ԱԲԵՂԱՆ.

Նա չար չէ, հայր, այլ միակ հաշտարար
Մարդու և կեանքի։

ՎԱՆԱՀԱՅՐԸ.

Ապա սո՞ւրբ է նա։

ԱԲԵՂԱՆ.

Սո՞ւրբ, ինչպէս Աստուած և իւր օրէնքը
Եւ սիրելի է, որքան և կեանքը...
Ես մեղք չեմ անում, հաւատա, հայրիկ...
Դուք ինչու համոր ինձ այստեղ բերիք.
Ես ի՞նչ եմ արել, չէ՞ ես էլ եմ մարդ,

Նրանցից մէկը, որ այնքան ապատ
Ապրում են իրանց ցանկութիւններով,
Որ աղօթում են ուրախ սրտերով...
Ինչու համար է իմ աղօթքն այստեղ,
Ո՞ր մեղաւորին կըտանէ եղեմ...
Ինչու համար եմ չարչարվում անմեղ,
Եւ եթէ այսպէս ես այստեղ մեռնեմ
Ձեզ կամ Աստծուն ինչ շահ իմ մահից...
Ուզում եմ ապրել. հայր, կեանք տուէք ինձ...

ՎԱՆԱՀԱՅՐԸ.

Կեանք տալը Նրա ձեռքին է, որդի,
Մարդս ի՞նչ կանէր, որ շատ էլ ուզէր,
Բայց տամ, տեսնենք իղձը քո սրտի—
Ի՞նչ ես կամենում:

ԱԲԵՂԱՆ.

Մի աղջկայ սէր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ.

Պատանեա՛ր, ո՛վ լերբ, աչքիս հեռացիր,
Մի՛ տպականիր և մեր աղօթքը,
Շուտո՛վ հեռացի՛ր, կամ դեռինն անցիր,
Զբպղծէ տաճարի սեամը քո ոտքը:

Քո սրտին արդէն տիրել է չարը,
Հեռացի՛ր, Աստծոյ բարկութիւնը տար,
Որ չընկրծանէ և այս տաճարը
Քեզ Հոսանելի պատուհան արդար։
Կամ ապաշխարիր պահքով, աղօթքով,
Հեռու հալածիր դիւական կիրքը,
Էլ այդպիսի բան չանցնի քո մտքով...
Շե՛ւտ, առանձնացի՛ր, կարդա սուրբ գիրքը։

ԱԲԵՂԱՆ.

Զէ՛, էլ չեմ կարող հերիք էր ինչ որ
Առանձնութեան մէջ տանջուեցի լուռ,
Էլ չի բռնանալ այս տենչատաջոր,
Սուրբ սիրոյ վրայ քո սիրտը մեռած։
Արդ ես համարձակ խոստովանում եմ
Քո և աշխարքի առջև իմ սէրը,
Եւ բոլոր հոգով արհամարում եմ
Անցած դարերի խաւար ծէսերը։
Դու էլ ես տպրել նախնեաց օրէնքով,—
Ապրել ես միայնակ, մտրպոց անօգուտ,
Այլև անկանոն, յաւալի կեանքով,
Մեղքեր ես միմիայն վաստակել հոգուդ։
Դու էլ, հնազանդ քո նախնեաց կարգին,
Ուխտեցիր տանել կեանքը վանական,

Բայց յաղթեց խաւար բռնութեան կամքին
Միշտ ամենազօր օրէնքը բնութեան...
Զէ՛, չեմ ճանաչում, ես չեմ դատանում
Այնպիսի Աստուած, օրէնք անիրաւ,
Որ անարգում է սէրն ամուսնական.
Օրհներ, ծերունի և մնաս բարեաւ։»

Սիրավառ սրտի համարձակ լեզուով
Ծերունու դիմաց խօսաց արքեղան,
Որ, բարկութիւնից սասանիկ դողալով,
Աստծոյ անունով նզովեց նրան։
Եւ մեծ դարպասը լուռ մենաստանի
Ծանրը ճռնչաց ու լայն բացուեցաւ,
Վանքից մի հոգի հեռու աւանի
Ճանապարհն ընկաւ. օրը լուսացաւ...

1890 թ.

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԷՏՈՒՆ.[1]

(Ժողովրդական աւանդութիւն)

.....

Ժամանակով Կատուն ճոն[2] էր,
Շունն էլ գլխին գլակ չունէր,
Միայն, գիդեմ ոչ որդիանց-որդի[3],
Ճանդել էր մի գառան մորթի։
Էկաւ մի օր, ձմրոնամրտին,
Կատվի կուշտը, տարաւ մորթին.—
«Բար՛աչողում, ուստա Փիսо,
Գլուխս մրսեց, 'ի սէր Աստոյ,

---

[1] Այս աւանդութիւնը լսել եմ Լոռի և գրել տեղական բարբառով, որքան կարելի էր մեղմացնելով բարբառի կոշտութիւնը։ [2] Ճոն—գլխարկ կարող։ [3] Որտեղից որտեղ։

Առ էս մորթին ու ինձ համար
Մի գդակ կարի գլխիս յարմար.
Վարդգ կըտամ, միամիտ մնա,
Միայն խնթրում եմ շատ չուշանայ։»
—«Աչքիս վրայ, քեռի Քուչի,
Մի գդակ ա խու մի քուրք չի,
Քու թանգագին խաթեր համար
Ուրիսաթ օրը համեցէք տար.
Գողի մասին աւելորթ ա,—
Մեր մէջ խօսալն էլ ամօթ ա,
Ինչ վինձ[1] բան ա, աօ հէր օխնած,
Հա՛, հա՛, հա՛... մի գդակի վարդ...»

*

Ուրիսաթ ծէքին քեռի Քուչին
Ուսակից ծէրքին[2], բայ բայ կուձին[3],
Թաւի թաւի տալով ծանդրը ու մեծ
Ուսաս Կասվի շէմքում կանգնեց.
«Ուսէն ո՞ր ա... փատախս[4] ո՞ր ա...»
—Մի քիչ կացի, հրէս կերևայ։

*

1 Վինձ—մեծ։ 2 Ծէրք—առաջ, վաղ։ 3 Կուձի—գլուխ։
4 Փատախ—գդակ, գլխարկ։

Ուստէն էկաւ քուրքը հագին.
Շանը տեսաւ, բեխի տակին
Իրան իրան քիչ փնթփնթաց
Ու մուշտարու վրայ թնդաց—
«Ցրտատար էլար... վահ, անաշէն,
Ձես թողնում, որ մի շունչ քաշեն.
Սհաթ խաւ չի, դեռ հլա նոր եմ
Ցրցամ տուել[1], թէ որ կարեմ։»
—«Դէ, հեր օխնած, էթէնց[2] ասա,
Էդ բարդանալդ էլ ընչիս ա.
Փող եմ տուել, շուտով կարի,
Թէ չէ, ասա էդուց արի...»
Ասաւ Քուչին ու նեղացած
Վերադարձաւ դլուխը բաց։

*

Մին էլ էկաւ, դարձեալ չըկար.
Էս անգամը դիպան իրար,
Էլ անպատիւ, պեռոը[3] խօսքեր,
Էլ հին ու նոր, էլ հէրն ու մէր,
Էլ դող Փիսօ, էլ քաչալ Շուն...

---

[1] Ցրցամ տալ—սրսկել, (ջուր սրսկել)։ [2] Էթէնց—այդպէս։ [3] Պեռոը—անառակ։

Բանը հասաւ դիւանբաշուն[1]:
Մինչև շունը գնայ-եկաւ,
Ուստա կատուն կոտրին ընկաւ[2],
Գլուխն առաւ ու մի քըշեր
Հայդէ, կորաւ. էն գնալն էր...

*

Էն օրուանից մինչև օրս էլ
Շունն էս բանը չի մոռացել.
Մաքումը հլա դեռ պահում ա.
Որտեղ կատվին պատահում ա,
Վրայ ա վազում, մորթուց քաշում,
Իրան մորթին եկ ա ուզում:
Իսկ սևերես կատուն յանկարծ
Ետ ա դառնում ու բարգացած
Փշոտցնում ա, մթամ[3] նոր եմ
Ցրցամ առել, թէ որ կարեմ:

1886 թ.

1 Դիւանբաշի—նախագահ դատաւոր: 2 Սնանկացաւ:
3 Մթամ—իրրև:

ՄԻ ՊԱՏԿԵՐ.

.....

Մութը արդէն դեղինն առաւ
Քօշաքարայ սարերում,
Գագաթների տեսքը կորաւ,
Եւ ողջ թաղուեց խաւարում։

Տխուր, ամպած երկնքիցը
Մանրը անձրև է շողում,
Հեռու լերանց եռևիցը
Մերթ ծուխանն[1] է խաղում։

Ահա փայլեց և մօտիկից
Լուսափայլեց սար ու ձոր,
Պարտուելով, սարի տակից
Գետը վազում է պղտոր։

---

[1] Ծուխան—փայլակ։

Բինում լռեց աղաղակը
Եւ հանդչում են վաստակած,
Միայն վրանում հանդչող կրակը
Մերթ բռնկում է յանկարծ։

Բայց հովիւը դեռ արթուն է,
Դեռ կանգնած է արխաջում[1],
Անքուն աչքով դեռ հսկում է,—
Գողից երկիւղ է քաշում։

Փայլակն ահա փայլեց կրկին,
Նրա կարմիր լուսի տակ
Բինից հեռու երևացին
Երկու մարդու կերպարանք։

Ամպը դուրս ու սրբաքեց,
Եւ անձրևը սաստկացաւ.
Հովիւն «հէյ-հէյ» աղաղակեց,
Շունը թևից[2] վեր կացաւ։

---

[1] Արխաջ, Թուրքերէն բառ է—հօտի բացօդեայ հանդստուելեան տեղն է։ [2] Այն որոշեալ տեղն է, որտեղից շունը հսկում է։

Հրացանները որոտացին,
Ոչխարն եղաւ ցանուցիր,
Հաւարն ընկաւ, ողջ զարթնեցին.
Մութն է գիշերն—ակնակիր:

Հեղեղը խուլ շրրփում է,
Վայր է հոսում անընդհատ,
«Տարան... հասէ՛ք...» դեռ լսվում է
Հովուի ձայնը հեռացած:

1891 Թ. ապրիլի 15.

ԳԵՑԻՄ ԼԱԲԵՐԻՈՍ

(Ռուսերէնից).

Եւ խայտաճամուկ միմոսի շորով, Կեսարի[1] կանչին,
Մեր Լաբերիոսը կանգնեց կրկէսում Հռովմի առաջին.
Թնդաց Հռովմը... և ամբոխներից վեր կացան յանկարծ
Աղնուականները և ժողովուրդը վախից սարսափած.
Եւ դղրդացին արձակ կրկէսում շփոթ ու շշունչ,
Հաղիւ լսելի խառնակ աղաղակ և դժգոհ տրտունջ.
—«Լաբերիոսն այստե՞ղ, և ինչպէս միմո՞ս, այստեղ
օրէնքով
Գերիներն իրանց կուռ շղթաների շռնչիւններով
Եւ սրի ձայնով անմահ Հռովմի հրճուանքի համար
Ճգնում են ըմբշի կամ թէ միմոսի պսակ ստանալ...
Լաբերիոսն այստե՞ղ... բայց չէ մոռացել Հռովմը նրան,—
Հին քաղաքացի և հռչակաւոր երգիչ աննման,

---

1 Անցքը պատահել է Յուլիոս Կեսարի օրով:

Իսկ արդ կրկէսում, ամբոխի առջև այսպէս նա
կանգնած,
Լուռ ու գլխակոր գետնին է նայում ամօթից
կարմրած...»
Եւ խօսակցութեան անորոշ ձայնը նրան է հասնում.
Նա իւր աչքերը հռովմի վերայ չի համարձակվում
Բարձրացնել այժմ—նրա բացայայտ վճռի ժամանակ.
Այս անարգանքին ինքնաբաւական հայեացքով մենակ
Կեսարն է նայում; Նա նշան տուեց հրամայող ձեռքով,
Գոռոզ հռովմը լռեց վերստին: Կորացրած գլխով,
Ինչպէս աղօթող ծանրը փորձանքի ահաւոր ժամին,
Կանգնած է յուզուած հանդիսի առջև երգիչ ծերունին:
Բայց նրա դէմքը առաջուայ նման փայլեցաւ վառ-վառ,
Եւ լայն ճակատը վերստին դարձաւ հանգիստ ու
պայծառ,
Դժգոհ ժողովին խոհուն աչքերը նայեցին կրկին,
Եւ նորից երգի, բանաստեղծութեան համարձակ հոգին
Հասաւ պօէտին, նրան սիրտ տուեց. նա զուարթացաւ,
Եւ սառնութիւնը սրտից մինչև մատները անցաւ...
Այլակերպուած է նա բոլորովին... մի ակնթարթում
Նա ոգեւորուեց.—նրա աչքերը կրակ են ցայտում.
Նայում է շուրջը ընկճող հայեացքով... տարածեց ահա
Խռովութիւնից դողացող ձեռքը քնարի վերայ.
Ժողովը լուռ է. բոլոր աչքերը խոնարհուած են ցած,
Աղնուականները մթին գիշերից մռայլ են նստած,
Եւ ասպետները նստած են խրոխտ, դէմքով կենճռալի,
Ուրախութիւնից փայլում է դէմքը ահեղ տիրողի:
Նոր նշան տուեց. և ահա երկչոտ և անհամարձակ
Լսուեցաւ ձայնը... Մերի դողդոջուն, չոր մատների տակ

Գովուած .քնարի թրթռուն լարերը հնչեցին կամաց,
Խորին լռութեան ժամին առաջին երգը որոտաց...
Եւ սթափուեցաւ Հռովմը նորից. մարդիկ շարժուեցին
Եւ աշխատում են պարզորոշ լսել զայրացած երգչին.
Իսկ ալեորը—անխիղճ անպատուած հին .քաղաքացին
Տակաւին հպարտ, արհամարանքով նայում է Հռովմին.
Նա երգում է անբաւ փառքը, մեծութիւնը Կեսարի,
Բարձր խելքն ու տէրութիւնը, իշխանութիւնը բարի.
Երգում է փայլը նրա յաղթութեան և մաղթում է
կեանք,
Եւ ուղարկում է հզօր Կեսարին յարգ ու մեծարանք.
Փառաբանում է նա ճոխութիւնը և փառքը Հռովմի,
Եւ աղաչում է, որ բաժին անեն... խինդը միմոսի։
Նա թախանձում է, որ ողջ մնածեն ինչպէս որ ինքը,—
Կեսարի շրթան վերայ ճանաչեն իրանց օրէնքը.
Որ հին օրերի ազատ երգերը խպառ լռէին,
Եւ միշտ Կեսարի թշնամու ջանքերն իզուր ցրուէին.
Հայրերի գոռոզ Հռովմը գլուխ խոնարհի նրան,
Հռովմում մարդիք մնածեն այնպէս—միմոսի նման...
Յանկարծ վերաւոր երգիչը ցնցեց գլուխն ալեզարդ,
Հնչող լարերին կատաղի ձեռքով զարկեց յուսահատ,
Աչքերում փայլեց բարկութեան բոցը, .քնարը ձգեց,
Այլևս չերգեց, այլ բոլոր ուժով գոռաց արձակեց
Խեղդուելով ցաւից և բարկութիւնից ալեորը հէգ—
«Քաղաքացիներ, իրաւունքներս կորցնում ենք, ելէ՛ք։»

ՏԸՐՕՆԻ ԳԸՐՈՒՆԸ.

(Հատուած պօէմայից).

.....

Գարունն եկաւ և թռչերը
Հովիտներում տարածեց,
Հայաստանի խիստ ձմեռը
Լերանց ծայրերն հալածեց։

Ժպտաց երկնից Արեգն աչեղ
Եւ ձիւնները հալուեցան,
Հով սարերի վերայ տեղ տեղ
Վրաններիը շարուեցան։

Մուսարէկի գաղան օրէն
Դարձեալ ինքաւ իւր ուրթում,
Նրա մարդիքն առած ծիրէն՝
Մարդասէր են պտրր ու

Յանկարծ տիրեց ահ ու սարսափ
Խաղաղանիստ վայրերին,
Մի միայն երէն Ճնաց ազատ
Բարձրը լերանց ծայրերին։

Յարեաւ կեանքով դարնանաբեր
Եւ հրձվում է ողջ Տարօն,
Բայց չէ լսվում աշխատասէր
Հայ գիւղացու հօրօրօն։—

Գարուն են եկաւ, սարերն ելաւ
Ազատ քիւրդը յաղթական,
Գարուն եկաւ, իւր ցուսն առաւ
Հայ գիւղացին դաղթական։

1890 թ.

ՆՈՒԷՐ ԸՆ. ԸՖ.-Է՝.

.....

Նորեկ դարուն՝ լեռնական Հային
Տեսաւ առատար օտար աշխարքում,
Տեսաւ մոլորուած մտքով ախարդին,
Եւ այսպէս խօսաց թախծալի սրտում.—

«Յիշում ես, պանդուխտ, քո Հայրենիքիդ
Թանձր անտառը, ծառերը հսկայ,
Զքնաղ լեռները և ծաղկափթիթ
Մարգագետինը, որ այստեղ չկայ.

«Գոչող ջրվէժը, որ ողողելով
Իջնում է պլխիս մռայլ ժայռերի,
Զուարթ հաւքերը, որ ճռուողելով,
Մերթ խլացնում են [illegible] ականջի.

«Երկրի վայրենի գեղեցկութիւնը
Եւ գեղածիծաղ երկինքը անհուն,
Նորա փառահեղ, պերճ հորիզոնը
Վաղ առաւօտեան, իրիկուան պահուն...

Եւ այն բոլորը, որ թողել ես դու,
Որ այնքան փարթամ, այնքան սիրուն են...
Օ՜, մի՛ արտասուիր, խորտակուած մարդու
Արտասուքները այստեղ դին չունեն։—

Նրանք այս օտար ու սառն աշխարքում
Կրկորչեն, ինչպէս կաթիլը ջրի,
Եւ քո թախիծը, դարձեալ քո սրտում,
Մենակ քո անձը պիտի տաչորի։»

1891 Թ. մարտի 24.

ԿԱՆՉ.

Եթէ կաս, Աստուած,
Եւ չես ստեղծել
Արտասուք ու լայ,
Հեծել, անիծել.
Թէ չար նախանձի
Թոյնով մահացու
Դու չես վարակել
Պարզութիւնն հոգու.
Թէ դու չես ասել,
Որ կեանքը այսպէս
Լինի անսպառ
Տանջանքի հանդէս,—
Մեղմացրու մարդկանց
Կիրքն ամբարտաւան,
Եթէ դու Աստուած
Ես խաղաղութեան:

Տէ՛ր արդարոց,
Աստուած արդարի,
Ո՞ւր ես, եթէ կաս,—
Ես աղօթք արի,
Բայց սրածութեան
Ահարկու ձայնից
Խլացաւ իսկոյն
Իմ աղօթքն անբիծ.
Եւ ես, վայրենի
Կրքից կատաղած,
Անբարիշանների
Քարերից փախած,
Քո անուան յուսով
Կռուեցի երկար,
Պարծեցայ Քեզնով,
Սակայն Դու չեկար։
Էլ ինչո՞ւ եմ ես
Տառապում այսքան,
Եթէ Աստուած ես
Դու անմեղութեան։

Ինչո՞ւ տակաւին
Ձեռ պատժում չարին,

Այժմ է պակասում,
Թէ չենք աղերսում.
Թէ չարագործին
Դու չես տուել սուր,
Որ խաղաղ հողին
Սարսափէ 'ի ղուր.
Թէ Դու չըպիտես,
Որ այսաեղ—երկրում
Մարդը ժպտերես
Մարդ է դիշատում.
Դէ արի՛ ու տե՛ս,
Զարկի՛ր ու շանթի՛ր,
Եթէ Աստուած ես
Դու վրէժխնդիր:
Ինչո՞ւ չես դալիս,
Ո՞ւր ես, եթէ կաս,
Թէ դու չես տալիս
Խեղճին պատուհաս:

1891 Թ. փետրվար.

ՀԱՄԵՐԳ.

Վտակը ժայռից ներքև է թռչում,
Թափ տուած ընկնում քարերի գլխին,
Զարկում աւազին, շաչում է, ճչում,
Ճչում անհանգիստ, փրփուրը բերնին։

Ինչպէս ծերունին ձայնով պատուած
Ձայնակցում է իւր թոռնիկի երգին,
Այնպէս է մօտիկ անտառը կամաց
Արձագանգ տալիս ջրի ապմուկին։

Սակայն բնութեան զուարթ համերգի
Անխօս ունկնդիրն յաւիտենական—
Ժայռը մտախոհ, իւր անյայտ մտքի
Եռեւից ընկած, լսում է նրան։

1890 Մ. դեկտ. 2.

* * *

Դեռ անյիշելի վաղ մանկութիւնից
Անյայտ ըղձերով թռչում էի վեր,
Միաժամանակ քարշում էին ինձ,
Դէպի ստորև ախտաւոր կրքեր։

Հնապանդուեցի մոլութիւններիս,
Ոչ ոք էլ նրանց մասին չբխորհեց,
Իսկ կեանքը դրկեց և, փաղաքշելով,
Հեշտասիրութեամբ սիրաս տոգորեց։

Սակայն ի՞նչ է նա, ինձ ոչ ոք չասաց,
Մեղ ի՞նչ է տալիս կամ ո՞ւր է տանում,
Որ, մէկը միամիտ, իսկ միւսն ստիպուած,
Անվերջ սիրելով կեանք են անուանում։

Եւ ես, անդիտակ նրա խորհրդին,
Անձնատուր եղայ բոլոր ուժերով,
Մինչև որ հասայ ինձ խաբող կէտին,
Մինչև որ տեսայ յոգնած աչքերով.—

Վարդերով ծածկած կորստեան անդունդ,
Քաղցրաբնեալքով պատած մահաղեղ.
Մարդիք յառաջ են վազում սրատթունդ,
Եւ օրապակաս ընկղմում այնտեղ.

Մեռելի վրայ բարձրաձայն սգում,
Վաղաժամ մահ են ողբում անդադար,
Ցեղնում, շշնջում, բայց դեռ չեն զգում,
Եւ զարձեալ շուտով մեռնելու համար...

Ա՛խ, որքան շատ են ճանապարհները,
Որ մեզ տանում են դէպի դերեզման,
Եւ ինչպէս մոլի մեր թարմ ուժերը
Մենք սպառում ենք ձեռքով սեպհական...

1890 Ի. սեպտ. 30.

*
* *

«Երբ խօսում էիր, պատմում էիր ինձ,
Ես այն ժամանակ տրված քո շնչից
Եւ յափշտակուած քեզ էի նայում,—
Իմ հոգին մենակ այն էր դրուում,
Թէ ինչպէս էին շարժվում բոլբոքուած
Թերթիկները քո վարդագոյն շրթանց,
Ինչպէս աչքերդդ տրտնջանուելիք
Սառներների մէջ, որպէս ծով հանդիստ,
Մերթ լցվում էին խաղաղ հրապոյրով,
Մերթ վառվում էին բարկութեան հրով...
Ինձ թվում էր, թէ երազում էի,
Եւ իրրև հեռուից ես լսում էի
Մի խուլ մուզիկայ և ոչ թէ բարբառ...
Ա՜հ, նորից խօսիր, բայց երկա՜ր, երկա՜ր...»

1891 Թ. հոկտ. 10.

* * *

Կուրծքս երբեմն եռ է գալիս և յուզվում.
Ես մնում եմ անշարժ, ինչպէս լուռ արձան,
Միտքս թռչում դէպի երկինք և սուզվում
Տիեզերքի խորութեան մէջ անսահման. . .

Ամփոփում է յանկարծ երկիր բովանդակ·
Սիրատարփիկ կուսի կուրծքին է փարում,
Խոնարհուելով ինքնում մինչև ոտնատակ—
Արհամարհուած սրբութիւնը համբուրում. . .

Ցեան է թռչում և մոլորուած դեղերում
Քաղցրայուշիկ խոր անսեալի լուռ ծոցում,
Եւ թրթռում արդէն լռած երգերում,
Սառն ու տխուր շիրիմները շօշափում. . .

Հետաքրքիր ցանկութիւնով թեւառած
Ապագայի մթութեան մէջ խարխափում,
Եւ, մի սաստիկ տենչով լեցուն, սաւառնած
Երջանկութեան սահմանները թեւածում. .

Թռչում է միտքս,
Կորչում է միտքս,
Եւ չեմ հասկանում,
Ինչ եմ ցանկանում։

1890 թ.

* * *

Ա՛խ, ես երանի
Կայծակ լինէի.
Որոտ-ճայթիւնով
Մռայլ ամպերից
Թռչէի վերև,
Զարկէի ուժգին
Եւ պատռէի
Կամարն երկնքի,
Ցոյց տայի երկրին
Գաղանիքը վերին,
Որ տեսնէր այնտեղ
Ինչ բան կայ ահեղ,
Կամ ով է նստած
Եւ ուր է Աստուած...

1891 Ս. յունվարի 13.

ԵՐԳՉԻՆ

Ապա, այն երգն ասա, երգիչ,
Որ հեծծանք է միայնար,
Այն սրատանջ և մորմոքիչ
Երգը երգիր ինձ համար։

Սիրտս լիքն է լուռ վշտերով,
Շո՛ւտ, այն տխուր երգն հնչիր,
Եւ քո երգի նուրբ ձայներով
Արցունքներըս դուրս կանչիր։

Շատ թաղցրի սրտիս միջին
Զգայարդուրկ մարդկանցից,
Այժմ ուզում եմ քո առաջին
Ողջ դատարկել իմ սրտից։

Դէ շո՛ւտ ասա, որ ինչպէս թոյն
Ինձ չքանչին յաւիտեան,
Երգի՛ր, երգիչ, և նրանք խկոյն
Իմ աչքերում կերևան։

1890 Ա. դեկտ.

*
* *

Ո՛հ, խնայեցէք, մի՛ յիշեցնէք ինձ,
Թէ ինչպէս էր նա արտասուք թափում,
Երբ, արդէն խաբուած նենգաւոր խօսքից,
Անձնուրաց սիրոյս էլ չէր հաւատում։

Ո՛հ, մի՛ հեշտացնէք, այդ խօսքեր են լոկ
Եւ չեն դարձնելու կորուստս անդին,
Անտարբեր է՛ք դուք, դեռ ձեզ անտղոք
Բաղդը չէ մատնել սիրոյ վտանգին։

Մի՛ յիշեցնէք, մի՛, թէ ինչպէս դաժան
Մարդիք իրարից անջատեցին մեզ,
Թէ ինչ եմ տարում նրանից բաժան...
Թողէք ինձ հանգիստ,—ես դոհ եմ այսպէս...

Ո՜հ, ես չեմ կարող չարչարուել անվերջ,
Ուզում եմ խնդալ ցաւերից հեռի,
Եւ մոռացութեան ալիքների մէջ
Թաղել յիշատակն անցած օրերի։

1890 Ս. յունիսի 25։

ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ.

Ես չեմ ուզում մարդ իմանայ
Իմ անցքերը խորհրդաւոր—
Սէրս ու վիշտս, որոնց վերայ
Խիղճ և Աստուած են գտաւոր։

Նրանց կըտայ սիրտս հաշիւ
Եւ նրանցից կըհայցէ դուրթ,
Եւ թող ինձ նա միայն պատժի,
Ով յաւերիս տուեց տնուրդ։

Նախատինքը անմիտների
Չի խռովիլ բարձրը հոգին,—
Ոլքան ծովը գոռայ, փրփրի,
Ժայռը կանգնած է վերատին։

Նրա ճակատը, բարձրացած,
Ամպերումն է մշտամռայլ,
Եւ մրրկից ու որոտից զատ
Միտքը ոչում չի հաւատալ։

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ.

Այս կրծքի տակ ապականուած,
Հեռու կեանքի ժըխորից,
Դեռ մի հնչիւն կայ պահպանուած
Իմ մանկութեան օրերից։

Եւ երբեմն պատահում է,
Որ հնչում է նա յատակ,
Կեանքի ձայնը նշիահում է—
Ես շնչում եմ համարձակ։

Պայծառ շողերն յիշողութեան
Մանում են ծոյն անցեալի,
Լուսաւորում իմ մանկութեան
Անհոգ պատկերն անձկալի։—

Ահա երկինքն իմ հայրենի,—
Հայի սրտի նման պարզ,
Ահա երկիրն իմ հայրենի—
Կանաչազարդ հանապազ։

Ողջոյն ձեզ, ո՛վ ուրախ, տղատ,
Անցած օրեր իմ մանկութեան...
Ա՛խ, ձեզանից ինձ մի բաց տատ
Անջատել է յաւիտեան։

Ահա փոքրիկ իմ քոյրերը
Խաղ են անում միասին,
Օ՜հ, անհանդիստ, չար եղբայրը
Նրանց ծեծում է կրկին...

Մօրս ձայնը մեղկիկական
Ահա հնչում է քնքոյշ,
Նրա հայեացքը մայրական
Ինձ հետևում է ղգոյշ։

Ահա կանգնած է իմ տատը
Մեր բազմահոգ դիւղացին,
Մեծամտորմին և քաջալանչ,
Ծիծաղ չբկայ երեսին։

Ո՜հ, լսում եմ նրա երգը
Միանման ու տխուր.
Լայնաբերան նրա վէրքը
Մեծանում է օր-աւուր. . .

Ահա թշուառ հայ գեղջկուհին,
Դէմքը վշտոտ ու նիհար,
Պատառոտած մի շոր հագին,
Զարշարվում է անպատար:

Ահա ծերուկը, շարժելով
Ալիքները առաջուան,
Կեանքն է յիշում հառաչելով
Եւ մտնում է գերեզման. . .

Եւ պարզ աչքով ես տեսնում եմ
Հայրենիքս ծաղկաւէտ,
Այն ճոխ երկրից ես լսում եմ
Անհոգ ծիծաղ լոյի հետ. . .

Դալարագեղ նրա հովտում
Ի՜նչ ազմուկ է վայրենի,—
Գեսի գոռոց և որոտում
Հոպարաւոր ձայների:

Ահա նրա լուռ, տխուր
Խաղաղ դիշերն աստղաշատ,
Ահա նրա հանդիսաւոր
Առաւօտը յօդապատ.

Նրա ձորերն անդնդափոս
Եւ բարձրաբերձ քարափը,
Նրա սարերն ու յորդահոս
Սովորական տարափը.

Երբ որ կայծակը շեշտակի
Ահեղորոտ ինչնում է,
Անտառապատ և վիթխարի
Լերանց կրծքին հանդչում է,

Ի՞նչ սիրուն է և հոյակապ
Հայրենիքս վշտակիր,
Եւ դու, մերժած սէր իմ հրատապ,
Այն լեռների մէջ հանդիր:

1890 Թ. յուլիսի 5.

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳ.

.....

Աչքի՛ գութան, վարի՛ գութան,
Օրն եկել է ճաշ գառել,
Առը շուր տուր, խուփիդ զուրբան,
«Օրհնեալ է Աստուած, հօրովհ՝ը»:

Քաշի՛ր եզը, ուսիդ մատաղ,
Քաշի՛ր, քաշենք—վար անենք,
Ճիպտին տրա՛, քշի՛ր հօտաղ,
Մեր սև օրին ճար անենք:

Պարտքատէրը գանդատ գնաց—
Քեօխվէն կըդայ՝ կըծեծի,
Տէրտէրն օրհնեց, անվարձ մնաց,
Կըրարկանայ՝ կանիծի:

Երեխէքիս մերկ ու ակլոր—
Կրակին ածես հոտ չի դալ,
Սոված հոտած են, ամէն օր
Հարևանը հաց չի տալ։

Պակսութիւնը սևերես է.—
Հալածուած եմ իմ տանից,
Մինչև հարկ է, պարտք է, ծէս է,
Կըլրացնեմ դուքանից։

Դէ՛, քաշեցէ՛ք, դէ, քըշեցէ՛ք,
Էլ մեր դառը քըլտինքը,
Զարշարուեցէ՛ք, աշխատեցէ՛ք,
Ողորմած է երկինքը։

Արի՛ դուքան, վարի՛ դուքան,
Օրն եկել է ճաշ դառել,
Առը շուռ տուր, խափիդ ղուրբան,
«Օրհնեալ է Աստուած, հօրովհ՚ը»։

1887 թ. մարտ.

ՏԸՐՈՆԻ ԷՔԷԼՈՏԸ.

(Հատուած պոէմայից).

Կարմիր արևն առաւօտեան
Պայծառ յոլաց դէպի Մուշ.
Ծաւալուեցաւ ծովի նման
Մշոյ դաշտը քաղցրայուշ։

Նրա շուրջը խոշոր դէմքով
Կանգնած, լեռներն ահաղին,
Քնախնամխ, լուռ ապօթքով,
Նայում են վեր—երկնքին։

Սրածայնին օձապատյան
Ծագկապարար ափերում,
Մշուշի մէջ, ապատ, անփոյթ
Խաղ է անում, փրփրում։

Բայց հարսներ չեն յաւերժական
Խայտաձամուկ շորերով,
Եւ չեն եկել, որ լոգանան
Արածանու ջրերով.

Որ սիզաւէտ տափաստանում
Վազվզելով մանրաքայլ,
Երգ ասելով քաղ են անում
Մարգերի մէջ ցօղափայլ։

Արեգակի շողերի հետ
Ահա շոգայ և մի բան,—
«Ո՞վ զօրաւոր սուրբ Կարապետ,
Ո՞վ աւազանդ Հայութեան. . .»

Հանդիսատ կացի՛ր, բարեպաշտ մարդ,
Այն խաչը չէ քո պաշտելի
Սուրբ Կարապետ շքեղազարդ
Հայոց վանքի գմբէթի։

Ծայրն է քրդի սուր նիզակի,
Որ ճօճում է մշուշում.
Ահա և ձին աւազակի,—
Ի՞նչ արագ է նա քրշում։

Տեսաւ հեռուից քաջալերը
Զուարթ խումբը քաղաքի,
Եւ ցոլացին սուր աչքերը
Ցանկութիւնից վայրենի.

Եւ սլացաւ, ինչպէս բաղէն
Խոյանում է ամպերից,
Մէհ, խեղճ կանայք, էլ ո՞ւր վազեն,
Ի՞նչ է դալիս ձեռքներից. . .

Հասաւ, ճանկեց... բռնեց թարքին
Օրիորդին ուշաբարձ,
Ասպանդակից, տաքացաւ ձին,
Եւ հեռացաւ սրընթաց։

1890 թ.

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ.

.....

Հեռու, ով սուրբ խաղաղութիւն,
Մենք քեզ համար չունենք անկիւն
. . . . . .
Եւ մեր ցաւած սրտի խորքում։

Գնա դէպի այն լեռները,
Ուր որ հովիւն ու գառները
Ապահով են պատառողից,
Մենք աղաս չենք ահ ու դողից։

Գնա, հանդիպ այն դաշտերում,
Ուր որ իրար էլ չեն տիրում
Եղբայր—մարդիկ, և հերկելով
Քեզ օրհնում են սուրբ երգերով։

Գնա դէպի երանաւէտ
Այն վայրերը, ուր կեանքի հեա
Թաղ չեն անում զուարճութեան
Կամ հեշտութեան համար միայն։

Իսկ մենք ցաւով լեցուն սրտով
Անկարող ենք միշտ անվրդով
Եւ քիւրդերի լուծը տանել
Եւ քեզ օրհնել, փառաբանել։

Հեռու, ով սուրբ խաղաղութիւն,
Մենք քեզ, իբրև մի լոկ անուն,
Երանութեամբ միշտ յիշելով
Պիտի կռուենք մեռցնող սրով։

1889 Ա. դեկտ.

* * *

Խղճալի՜ մարդ. տոգորուած
Իրան անյայտ և կորած
Օր ու կեանքի տենչանքով,
Հաղար ու մի տանջանքով,
Ցոյսերով միշտ անկատար,
Շտապում է անդադար...
Իւր գոյութեան ընթացքում
Դիակներով է ծածկում
Ասպարէզը իւր կոխած,
Եւ, արիւնով շաղախած,
Պիղծ ձեռքերով ուղում է
Երջանկութիւն ընդունել.
Չի նկատում, որ ի զուր
Եղած կեանքն էլ բանատուր

Առանց հաշուի վատնում է.
Իսկ երբ ոյժը հատնում է,
Գերեզմանի եղերքին
Կանգ է առնում ախրագին,
Ափսոսանքով արտասվում,
Յետ է նայում, և տեսնում,
Որ ողջ կորցրել է անդարձ,
Ինքն էլ կորչում է յանկարծ,
Ինչպէս շունչը իւր վերջին,
Ինչպէս հիւլէ մի չընչին։

1891 Թ. յունվարի 10.

* * *

Երբ տեսնում եմ, մարդ տակաւին
Պահանջածը դեռ չի ստանում,
Եւ յուսահատ գերեզմանին,
Մոլորութեանն է ապաստանում.

Երբ աչք եմ ածում շուրջս ու հեռու
Եւ չեմ դանում խաղաղ անկիւն,
Ուր հառաչը տանջուող դերու
Զբաբաշուէր տխրահնչիւն.

Այն ինչ խօսքը Մարդոյ որդու
Արհամարուած ու մոռացուած,
Եւ գլուխը ազատ մարդու
Մինչև գետին խոնարհած,

Բարկութիւնով լցուած հոգով
Ես ուզում եմ, որ հէնց իսկոյն,
Տիլոզ կեանքը իւր վայելքով
Դառնար ժանտախտ ու մահաթոյն...

Թող մեղաւոր հարանց շերմի
Վերայ որդիքն անապական
Ապրեն հանդիսա, և թող լինի
Նրանց օրէնքն Աւետարանն։

1891 թ. ապրիլի 25.



ՄԱՆԿՈՒԹԻՆ.

Երբ որ գարշկով տեսնում եմ շուրջս
Մոլեգնաց կեանքի պատկերը ցաւոտ,
Ցաճախ, մանկութիւն, խռոված հոգուս
Ներկայանում ես ինչպէս առաւօտ:

Եւ մանկան նման արտասվում եմ ես,
Երբ այս օրերում, չարութեամբ լցուած,
Քեզ, սուրբ մանկութիւն, յիշում եմ ինչպէս
Երազի տեսիլք անհետ չքացած:

Ինչպէս արևի ճառագայթը վերջին
Թռչում է յանկարծ, տիրում է խաւար,
Այնպէս շողացիր և անցար կրկին,
Մնացի անպօր, ցոփ կեանքին տուար:

Թէ հնար լինէր միանգամ դարձեալ
Դառնալ քո գիրկը... ա՛խ, ի՞նչ եմ ասում,
Այդ անհնար է.—արդէն հանդերձեալ
Կեանքի ճամբան է իմ առջև բացվում։

Բայց մինչև այնտեղ, սոսկալի՞ ուղի,
Ահա բռնութիւն, պատիւ անարգած,
Ահա հառաչանք, արտասուք աղի,
Ահա սև նախանձ և սէր սակարկած...

Կըմեռնեմ և ես այս ցաւերի տակ
Ինձ հետ տանելով շատ խղճ ու փափագ,
Իսկ այս աշխարհից և ոչ մի պսակ—
Միայն քո անմեղ, քո սուրբ յիշատակ։

Մի տխրատեսիլ գուցէ գերեզման
Անցուորականից խնդրէ մի բերան
Ողորմի ասել... ՞ով գիտէ, և այն
Կըլինի՞ արդեօք, կընայե՞ն նորան...

1889 Մ.

* * *

Մութն էր երկինքը, ոչ ոք չըտեսաւ
Բնութեան գործը գիշերուայ մթնում,
Միայն տուաւօտեան, երբ որ լուսացաւ,
Մարգարտափայլ ցօղ ինչել էր դաշտում։

Լուռ էր պօէտը թախիծը զէմքին,
Ինչ էր մտածում, մարդիք չիմացան.
Միմիայն տողերում, երբ որ կարդացին,
Զգայուն սրտի արցունքը տեսան։

1892 Թ, յունվարի 22.

* * *

Քրիստոս յարեաւ. հրաշափառ,
Յարեաւ աշխարքն էլ նորից,
Դու էլ, սէր իմ, յարութիւն առ
Մոռացութեան խաւարից։

Դու, որ աղատ միտքս ու հոգիս
Կախարդեցիր այնպէս վաղ,
Յայտնուեցար խոստումներով
Եւ հեռացար անյապաղ։

Արի՛ դարձեալ, որ առանց քեզ
Կեանքը դառն է և անճաշակ,
Քեզ կանչում եմ որ նորոգես
Մեր վայելքը վաղանցուկ։

Յիշի՛ր, որ քեզ դեռ սիրում եմ,
Եւ այժմ, ընկած պատրանքից,
Ձեռքս, ահա, տարածում եմ—
Ինձ ազատիր այս կեանքից։

1890 Թ.

ԳԻՇԵՐԱՑԻՆ ՄՏԱԾՄՈՒՆՔ.

.....

Էյ աստղեր, աստղեր,
Երկնքի աչքեր,
Որ այդպէս ցրուած
Շողում էք վառուած,
Գիտէք թէ ինչեր
Կամ ինչ գիշերներ
Ցիշեցնում էք ինձ։
Ապշեցնում էք ինձ.—
Շողում էիք դուք,
Երբ ես դեռ մանուկ,
Աշխոյժ ու կայտառ,
Ձեզ նման պայծառ

Թըրթռում էի
Եւ. ցաւ չունէի.
Շողում էք և արդ,
Երբ երիտասարդ,
Անհուն յոյսերով,
Խանդավառ սիրով
Եւ միշտ ուշավառ
Նայում եմ հեռու...
Կըշողաք նաև
Շիրիմիս վերև...

1891 Թ. յուլիսի 17.
Դսեղ.

ՆՐԱՆ.

Ես ուզում եմ, որ ինձ նման
Էլ չըսիրէր մէկը քեզ,
Բայց ասէին միաբերան,
Թէ դու, իրաւ, հրեշտակ ես:

Ես ուզում եմ, որ քո անմեղ
Սիրաը թեզաբ ինձ համար,
Եւ յաւիտեան վառուէր այնտեղ
Միայն իմ սէրը բոցավառ:

Ես ուզում եմ, որ օրն ի բուն
Աչքերիդ, աչքերիդ,
Ինձ մոռացած, կորչեմ անհուն
Խորութեան մէջ հայեացքիդ.

Իսկ եթէ մահն այն ժամի մէջ
Ինձ մօտենար, ո՜ սէր իմ,
Ես կուզէի քո սիրտանէջ
Կուրծքդ լինէր ինձ շիրիմ:

1890 Ա. հոկտ. 5.

ԳԵՐԱՍԱՆ ԵՐԱՄԵԱՆԻ ՄԱՀԸ.

«Մեռնել — քնել.»
ՀԱՄԼԵՏ.

Ողեւորող ընկաւ արդէն,
Եւ լռեցին նորա հետ
Սիրոյ ասնջանք, դայրոյթ ու քէն—
Լիր, Օսելլո և Համլէտ:

Մեռաւ — քնեց, հանգստացաւ.
Որպէս ապմուկ կենդանութեան,
Մեռելութեան միջից անցաւ
Եւ չըքացաւ յաւիտեան:

Էլ չի լսուիլ նորա ձայնը
Իմաստներով ոգեշունչ,
Յաւերժացաւ ասուածայինը,
Մնաց դիակն անմռունչ:

Եւ կը հանդչի լուռ և անշարժ
Դերասանը քարի տակ,
Բայց կը պատմի քարն տպառաժ
Մը բրիկալից յիշատակ։

Եւ այնելուն պիտի կանգնի
Շիրմի առջև փառագոչ,
Սրտի խորքից բացականչի
Զայնով հպարտ ու զողջոջ—
«Ոսկերացդ հանգիստ,
Անմահն արտիստ։»

1891 Մ. յունիսի 7.

ԲՕՄԱՆՍ.

(Պուշկինից.)

Մի աշնանային մռայլ իրիկուն
Մի աղջիկ գնում էր անմարդ տեղերով,
Իւր անբաղդ սիրոյ ծնունդը թաղուն
Բռնած դողդոջուն, քնքոյշ ձեռքերով։
Բոլորը լուռ էր. յոգնած աշխարքը
Հանգստանում էր գիշերուայ մթնում,
Այն ինչ ուշադիր աղջիկն իւր աչքը
Երկչոտ հայեացքով չորս կողմն էր ածում։

Եւ, հառաչելով անմխիթարանք,
Նա նայեց անմեղ այն արարածին.
«Քնած ես, մանուկ, դու իմ տառապանք...
Եւ անտեղեակ ես իմ սրտի վիշտին...

Աչքդ բաց կանես բարձրականչ լալով,
Սակայն իմ կրծքին էլ չես կպչիլ դու.
Վառ-առաւօտեան տարաբաղդ քո մօր
Ձեռմ համբոյրներին չես հանդիպելու։—

Ճչալով ի զուր կըկանչես նրան.
Աւաղ, ամօթ ինձ,—ես եմ մեղաւոր.
Դու կըմոռանաս մօրըդ յաւիտեան,
Բայց պիտի յիշեմ ես քեզ ամեն օր։
Ուրիշ ծնողներ կըմնամեն քեզ,
Եւ կասեն—դու օտար ես մեզ համար.
Իմ ծնողները ո՞ւր են, կըհարցնես,
Սակայն չես գտնիլ ոչ հայր և ոչ մայր։

Թշուառ երեխայ, մոքով ախրապին
Կըտանջուես օտար մանուկների մէջ,
Կընայես նրանց մօր փաղաքշանքին
Մոայլուն հոգով մինչև կեանքիդ վերջ.
Ամեն ժամանակ բաղդըդ կանիծես,
Ամեն տեղ տառապած, օտար ու մենակ,
Եւ միշտ նախատինք ու ծաղր կըլսես...
Օ՜, Ների՛ր, Ներիր ինձ այն ժամանակ։

Դեռ քնած ես դու... Թող քեզ, խեղճ մանուկ,
Այս վերջին անգամ իմ կրծքին սեղմեմ,

Օրէնքն անիրաւ, խիստ և անողոք
Մի դատավճիռ ունի մեր ընդդէմ։
Մինչև քո անմեղ ուրախութիւնը
Տարիները չեն քշել տակաւին,
Քնի՛ր, սիրելի, սև թախիծները
Խորթ են մանկութեան խաղաղ օրերին։»

Լուսինն անտառի եռևից յանկարծ
Երևաց, մօտիկ մի խրճիթ տեսաւ,
Դողալով, գունատ և սաստիկ լքած
Նրա դռանը տհա մօտեցաւ,
Զգոյշ կորացաւ ու կամաց զրեց
Իւր երեխային օտարի շեմքում,
Իսկոյն սարսափով երեսը դարձրեց
Եւ անյայտացաւ դիշերուայ մթնում։

ԵՐԳՉԻ ՎԻՃԱԿԸ.

Ծանր հեծութեան ժամանակների
Եւ ճնշումների անդգայ որդիք,
Կամեցայ սիրել, սակայն դուք բարի
Սիրաս ու հոգիս զայրոյթով լցրիք։

Բայց դրա համար ես այնպէս կերգեմ,
Որ այդ ձեր սիրտը յաւէջ պատռուի,
Ցխուր ձայներով կը թունաւորեմ
Հանգստութիւնը դալոց օրերի։

Յուսահատութեան թախծալի երգով
Լեղի կը դարձնեմ ձեր կեանքը բոլոր,
Եւ դուք կարտասուէք լեցուած աչքով,
Խնջոյքների մէջ նստած դլխակոր։

Եւ խիստ վրէժը զայրացած երգչի
Ձեզ կը հասնի մինչև դերեզման,
Ձեր սիրտը կայրի, հոգին կը տանջի,
Եւ կը տառապէք այսպէս յաւիտեան։

1891 թ. փետրվարի 22.

ԿՈՐՈՒՍՏԻՑ ՅԵՏՈՑ.

.....

Խնդրի՛ր, սիրա իմ կարօտակէզ,
Սէրա իմ պանդուխտ, վշտաբեկ,
Խնդրիր նրան, որ այլ ևս քեզ
Սփոփելու չէ երբէք։

Կանչի՛ր, կանչի՛ր, դուցէ կանչես
Հնչիւնները ըղձական,
Ինչպէս միտքս, ինչպէս հոգիս,
Թափանցեն այն դերեզման. . .

Իւր դրախտից դուցէ լսէ
Հառաչանքս ողբակէզ
Մտաբերէ և տխուսէ,
Որ ես տարուում եմ այսպէս. . .

1891 Մ. մայիսի 7.

ՔՐԻՍՏՈՍԻՆ ԱՆԱՊԱՏՈՒՄ.

Անապատի մէջ խաւար ու տխուր,
Ցրուած քարերից մի քարի վրայ
Գլխակոր նստած, մտախոհ ու լուռ
Մարդկութեան մասին մտածում էր Նա։

Նորա ճակատը մութն էր առաւել
Քան անապատը դիշերուայ մթնում.—
Նա պատրաստվում էր սէր—լոյս ծաւալել
Մարդկային կեանքի մութն անապատում...

Այնտեղ լսում էր աղմուկը մարդկանց
Անօրէնք երկրի ամէն մի ծայրից.
Ցաւում էր Նորա մեծ սիրտը՝ շարժուած
Մոլութեան երգի և սուդի ձայնից.

Եւ անապատում մի քարի վերայ
Միայնակ նստած արտասվում էր Նա...

1892 թ. յունվարի 18.

ԱՔԻԼԼԷՍ[1].

(Ժուկովսկուց.)

Միդում կորաւ Իպա լեառը,
Մուայլեցաւ Տրովադան,
Լուռ է մարտի հարթավայրը,
Քնած բանակն Ատրիդեան [2]:

---

[1] Յունաց դիւցազն Աքիլլէսի ընտրութեանն առաջարկուած էր իւր օրհասի որոշումը—կամ երկար ապրել առանց փառքի կամ երիտասարդ հասակում մեռնել փառաւոր մահով. նա վերջինն ընտրեց և, հայրենիքին հասած նախատինքը բառնալու համար, յունաց քաջերի հետ յայտնուեցաւ Տրոյիայի (Իլիոնի, Տրովադայի) պարիսպների տակ: Նա գիտէր նաև, որ Տրոյացւոց արքայորդի Հեկտորի մահից յետոյ ինքն ապրելու չէ այլևս, և սակայն սպանեց Հեկտորին իւր ընկեր Պատրոկլէսի վրէժն առնելով: Այնուհետև նրան ամեն տեղ հետևում էր օրհասի մահազուշակ ձայնը: [2] Ատրիդէս—հայրանունն է յունաց բանակի ընդհանուր հրամանատար Ագամեմնոն Թագաւորի:

Խաղաղ են շուրջ... առկայծում են
Խարոյկները բանակի,
Երկաթուձիգ ձայնարկում են
Պահնորդները մէկմէկի։

Ծագեց պայծառ լուսնեղջիւրը
Ծովի վերայ Էդէյեան,
Բարձրը ափերն և ասպերը
Ծովի խորքում ցոլացան։
Դասարկ դաշտում երևում է
Մենակ կառքը Պրիամի,
Որ հեկտորի դին տանում է
Բանակիցը յոյների [1]։

Ծովի ափին, բլրակի մօտ,
Ահա կանգնեց Աքիլլէս.
Տխուր, մռայլ ու վշտատ.
Եւ գլուխը նա թեքեց. . .

---

[1] Ծերունի Պրիամոս արքան, առաջնորդուելով Հերմէս դիցուհուց, դիշերով գնաց յունաց բանակը և ծնկաչոք խընդրեց Աքիլլէսից սպանուած որդու դիակը, մեղմացնելով անողոք դիւցազնի սիրտը սրտաշարժ խօսքերով, և, ստանալով, դիշերով վերադարձաւ Իլիոն։

Հեռու կառքով նշմարում է
Պրիամոսին ծերունի,
Լացն երեսից նա սրբում է
Իւր զգեստով ծիրանի։

Ապա հնչեց իւր քնարը.
Մեղմ է ձայնը գիշերդու,—
—«Ընկաւ, ծերուկ, քո հեկտորը,
Հանգաւ լոյսը քո հոգու։
Անդրամաքէն ու հեկաբէն
Քաղաքի մօտ անդադար
Քեզ են սպասում... դարձիլ բոպէն
Կեանք ու մահ է նրանց համար։

Եւ տխրաբեր արշալուսին
Կըբուրէ խունկ հաշտարար,
Թաղման երգով կըհեծեծեն
Ամենայն առն ու տաճար։
Հայր, մայր, այրի մաղթանքներով
Սափոր կածեն թանկ փոշին,
Եւ, զժոխքում, աղօթքներով
Հանգիստ կըտան հերոսին։

Օ՜, Պրիամոս, խոնարհեցիր
Գլուխդ Աքիլլի առաջին,

Եւ այն ձեռքը համբուրեցիր,
Որ լաց տուեց քո աչքին...
Որպուղ մասին էր քո աղերս.
Ահ, մի՛ արամիր, ալեզարդ,
Մի բաղդ վճռեց երկինքը մեզ—
Ինձ էլ ընկճեց Արամազդ։

Մօտ է ժամ. պատրաստած է
Նեռը անգութ օրհասի,
Եւ պարկուհին[1] ընդհատել է
Արդէն օրերն իմ կեանքի։
Դժոխքի դուռը ճռնչում է,
Կանչում է ձայնն ահռելի.
—Վերջացած է, հանդաւ ջահը
Պելիդէսի[2] օրերի։

Մաերիմբս շերմի մէջ է,
Զրկեց կռիւն ինձ եղբօրից,
Այսուհետև Աքիլլէան էլ
Կրհեռանայ այս երկրից։
Օրհասն այսպէս է որոշած,
Որ ես ընկնեմ Ծաղկելիս.

---

[1] Բաղդի աստուածուհին։ [2] Հայրենեաց [illegible]։

Խորթ ափերում և հեռացած
Պելէոսի աչքերից։

Ա՜խ, այս երկրում այլ ևս ապրել
Նաև սիրաս չէ տալիս,
Ուր էլ հոգիս չի քաղցրացնիլ
Ներկայութիւնն ընկերիս։
Հեկտորն ընկաւ, նրա մահով
Հանգստացաւ Պատրոկլէս,
Բայց ընկերիս վրէժ ու քէնով
Դէպի Տէնար կերթամ ես։

Էլ մի՛ սպասիր, ով Մենեսի[1],
Որպիսի չի գալ հօրանց տուն...
Նորա առջև Հելլեսպոնտի
Անտակ ջուրն է ադմրկում։
Քնած է նա... կաշկանդել է
Մահը քաջին աննահանջ,
Էլ չի ուռցնում սառած կուրծքը
Հուժկու ձայնը մարտական։

Այս ափերից յետ չէ դալու
Եւ Աքիլլէան անվեհեր,

1 Պատրոկլէսի հայրը։

Շուտով, շուտով պիտի և դու,
Ո՛վ, Պելէոս, որբանաս։
Կանցնի ռազմի արհաւիրքը,
Աքիլլէսին կը սպասես,
Կը զարդարես արքունիքը—
Նրան շքով ընդունես։

Դատարկ ծովին պիտի նայես
Ափից տխուր ու արտուում,
Թէ չեն դալիս արդիօք նաւեր,
Առագաստ չէ երևում։
Նաւեր կը գան Իլիոնից,
Ես չեմ լինիլ ոչ մէկում,
Ես չեմ զարթնիլ մահուան քնից,
Եւ կը մնամ այս դաշտում։

Ի դուր վերջին տապնապի մէջ
Դու քո որդուն կը խնդրես,
Եւ կարկամող բազուկներով
Նրան շուրջդ կը փնտրես.—
Սիրած երկրից ժամն անջատման
Չի քաղցրացնիլ նա այնտեղ,
Եւ վինչ ափերն մոտ [illegible]
Չի տարած [illegible] նոյնդեղ

Իմ հայրենի՜ք, վճիտ ջրեր,
Զքնաղ վայրեր հարազատ,
Եւ ձիթենիք ու դափնիներ,
Հովիտների զարդարանք,
Ձոխ ծաղկեցէ՛ք, զարդարուեցէ՛ք,
Ինչպէս առաջ, անմոռան,
Ինչպէս առաջ, միշտ թնդացէք
Միայն ձայներով խնդութեան։

Բայց Աքիլլ ու Պատրոկլէս
Էլ չէ՛ք տեսնիլ դուք բնաւ.
Սպերքի ջրեր, բաղուկս ձեզ
Գլխիցս մաղ խոստացաւ. . .
Բայց դլուխս փոթորկալի
Պատերազմում ահագին
Պատրոկլէսին ես զոհեցի,
Էլ չըսպասէ՛ք իմ տուրքին։

Թռչուն ձիանք, պատերազմից
(Գաղանի օրհասն տրպելից)
Զ'ապատեցիք դուք Հերոսին—
Զէնքի վերայ նա փռուեց։
Զիանք աշխոյժ և եռանդուն,
Այդքան ինչո՞ւ է՛ք տխրած,

Թաւ բաշերդ թոզած հողում,
Գլուխներդ կախ արած։

Մոռացել է՛ք ուսելիքը,
Հառաչում է՛ք և զողում,
Եւ շողում է՛ն արտասուքը
Ձեր հրափայլ աչքերում։
Դուք, երեւի, Աքիլլէսին
Վերջին անգամն է՛ք տեսնում,
Ուրեմն հատու է՛ք օրհասին,
Որ ինձ մահ է զուշակում։

Շուտո՞վ... Նեսը պատրաստում է՝
Ապոլլոնը անողոք,
Եւ եկեւրին սպասում է՝
Քարոնը[1] սև Սաիքսի[1] մօտ։
Եւ, ափերիս մոռացու թիւն,
Պատրոկլէսը գիշերով
Եկաւ ինձ մօտ, թեթեւ անձայն,
Որպէս երազ, թռչելով։

[1] Գուսպետ սատանիներ գիցաբ[illegible] Սաիքս (Ա-քեր[illegible]) գետի։

Որպէս շունչը մեզմ Զեփիւռի
Նա շշնջաց ինձ վերայ,
Նորա ձայնը ես լսեցի,
Վեր նայեցի և տեսայ—
Քնքոյշ դէմքին հեռք արտօսրի
Եւ անչափման խորին ցաւ. . .
Եւ ես ձեռքս տարածեցի. . .
Դատարկ մթնում էքացաւ։

Սկիւրոսից դէպի հեռու
Նէոպատէմ[1] կը լողայ,
Կրաեանէ ափ մի անծանօթ,
Կանաչ բլրակ նորա վրայ։
Նաւավարը նրան կասի,
Դարձած կողմը բլրակի,—
«Ա.հա շիրիմն Աքիլլէսի,
Այն էլ տեղն է բանակի։

«Այնտեղ, պարսպից, նա զիշերով
Երևում էր մեզ տհեղ,
Անտանելի հուրն աչքերում,
Սաղաւարտով ճաճանչեղ.

---

1 Աքիլլէսի որդին, որ Սկիւրոս կղզումն էր։

Եւ եռակի որոտալով
Ահ էր տալիս քաղաքին,
Եւ տրոյացին զունատ դէմքով
Զէնքը ձգում էր գետին։

«Այնտեղ, ձեռքը Ատրիդէսին
Տալով դաշը հաստատեց,
Այնտեղ, կառքով, նա մոլեգին
Տրոյի վերայ յարձակուեց.
Այնտեղ, հոգում, իւր հաւէյց
Քարշ տուեց դին Հեկտորի,
Յառեց աչքերն սպառնալից
Վերան լքած Տրոյի։»

Եւ իւր նաւէյց Նէոպտոլէմ,
Կիջնի տիրը սրբազան,
Որ միայնակ բլրի վերայ
Դնի և սուր և վահան.
Շուրջը արդէն դասարկուել է...
Խաղաղ Սիմոյս և Քսանթ,
Բաղեղ ու փուշ պատատել են
Տրոյիային քարուքանդ։

«Կանգնեմ դաշտը պատերազմի...
Ուր Աքիլլէան է կռուած,

Կըտեսնես հօրանն երէնների
Շիրմայ շուրջը մոռայուած,
Եւ քեզանից վերև յանկարծ
Կըլսես ձայն թեւերի. . .
Մենք կըլինենք... թեւթեւի տուած
Ընկերներս հին օրերի։

«Այնժամ յիշիր Աքիլլէսին,
Երկրից արագ նա անցաւ.
Բազդը նրան անփառունակ
Այստեղ մի դար խոստացաւ,
Բայց մերժելով դատարկ կեանքը
Փառքի բոպէն ընտրեց նա,
Եւ ընկերի համար մեռաւ,—
Հաւատարիմ մինչև մահ։»

Լռեց Աքիլլ... մութն է Իլան,
Իլիոնը դեռ տխուր,
Քնած է բանակը Ատրիդեան,
Պատերազմի դաշտը լուռ.
Եւ ծխալով առկայծում են
Խարոյկները բանակի,
Երկար ու ձիգ ձայնարկում են
Պահնորդները մէկմէկի։

ԵՐԱԶ.

—

Գիշերն երազում հալածում էին.
Փախչում էի չար թշնամիներից.
Նրանք խառնաձայն հետևում էին...
Դողում էին սիրտս ու ծնկներս ահից:

Իմ առջև տեսայ ընդարձակ դղեակ
Բարձրը պատերով փոքրիկ ծմակում.
Ես այնտեղ մտայ... անմարդ ու դատարկ
Այն աւերակը ինձ յոյս էր տալիս...

Զգոյշ կուչ եկած, շունչս պահած
Ես դողում էի մահուան սարսուռից,
Եւ, զարհուրելի աղաղակներով
Զարագործները մօտիկ էին ինձ:

Ցանկարծ զգեակի իմ շուրջ տարածուած
Գիրեղմաններից ձայներ դուրս եկան,
Իմ հոգուն ծանօթ ձայներ մոռացուած...
Եւ ես զօրութիւն առայ դերբնական:

Անարդ թաղասից դուրս թռայ իսկոյն
Որպէս վրդոված վագրը դարանից,
Եւ յարձակուեցի ընդդէմ թշնամուն,—
Զէնքերի բաղխում... դարթեցայ քնից:

1892 *յունվարի* 20.

ՊԸՏՈՒԻԼ.

Վանայ բանտի խորքից ելած հառաչանք,
Ձիչ, աղաղակ բռնաբարուած աղջկայ,
Թալանուածի լայ ու աղերս, աղաչանք
Թէ որ լսէք, ասացէք թէ՝ բան չըկայ։

Ամբողջ տարին արիւն-քրտինք աշխատող
Հայ գիւղացին թէ որ լինի սովամեռ,
Կամ յուսահատ տանից կորչի հողից հող,
Գրեցէք թէ՝ սաստիկ ցուրտ էր այս ձմեռ։

Թէ կրակուած հայոց գիւղի բոցերում
Վայ կանչելով մարդիկ այրուեն կենդանի,
Հաւատացրէք—խաղաղութիւն է տիրում,
Ժողովուրդը անքն օրհնում է սուլթանի։

Բան է, թէ որ (չի պատահիլ այդ իսկի)
Նահատակուած հային մի բան տանք, ասեն,
Դուք հասկացրէք, իբրև ծանօթ այդ ազգի,
Որ ժամը չէ, հայերը դեռ ալհաս են։—

Հայոց լեզուն Մեսրոպն իրան հետ տարաւ,
Իսկ կրօնը մի ադանդ է զենդական. . .
Սպասեցէք, մինչև որ մեր սրատաւ
Խնամքի տակ լուսաւորուեն, առաջ դան։

1891 Մ. մարտի 7.

«ՈՉ ՅՈՐԻՆԵԱԿ ԷՅԼՈՑ.»

Ազատ, համարձակ բարձրացիր, արատ,
Քո պատուանդանի վերայ ոսկեղէն,
Բարձրացի՛ր, իշխի՛ր... Թող մարդիկ անպարտ
Յորդ արտասուքով ոտքդ ողողէն:

Դո՛ւրս արի, յանցանք, մեծատան շեմքից,
Խեղդի՛ր, խորտակիր անմեղ տըկարին,
Մի՛ քաշուիր ակրոջ փառաւոր միրքից—
Նա ընկեր է քո առած աւարին:

Եւ քաջալերուած լըրենի բազուկ
Ձեղքիր ճակատը ճշմարտախօսի,
Արդէն արծաթով վաճառուեց ծածուկ
Եւ ճշմարտութեան խօսքը Յիսուսի:

Դու, սեղանաւոր, ձեռքդ տարածիր
Դէպի սեղանը մարդոց սրբութեան...
Մի՛ վախիր,—ամէն բողոք ու խնդիր
Պիտի սին օդում անկատար մնան:

1890 Թ. Հոկտեմբեր.

Ը. Ջ. Գ.

Հեռացրէք նրան Աստծոյ սեղանից
Որ չապականէ մեր սրբութիւնը,
Աղտոտ պահեցէք անտուրբ բերանից
Վարդանի պաշտած Աստծոյ անունը։

Աւարառութեամբ զբաղած բաղկով
Թող նա չբերէ մատանը Մեծի,
Եւ շահախնդիր, կաշառուած խօսքով
Կանգնի քարոզիչ փրկութեան գործի։

Թող չբռնտարեն հաշտ ու պատարագ
Սեղանատպուտ, անարժան ձեռքեր,
Ոչ նուիրական կամարների տակ
Անզգայ սրտից վերանան երգեր։

Եւ թող քարկոծուի, ով որ, անդիտակ
Մարդկային կեանքի վսեմ խորհրդին,
Կրհամարձակուի Հայոց յարկի տակ
Քարոզել — հովուել այս ժողովրդին։

1890 Ա. հոկտեմբերի 18.

ՄԵՐՈ.

(Գիւղացի մանկան պատմութիւնը.)

I.

Մեր գիւղն այն է, որ հպարտ,
Լեռների մէջ միգապատ,
Խոր ձորերի քարափին,
Ձեռքը տուած ձակատին
Մտածում է տխրադէմ.
Ինչ է ուզում, չըգիտեմ. . .
Այնտեղ մենք պաս չենք ուտում,
Եւ ջերմեռանդ աղօթում,
Ժամ ենք գնում ամեն օր,
Բայց միշտ յաւեր նոր անոր,
Միշտ մի աղէտ, մի վնաս
Մեզ հասնում են անպակաս:—

Ա.հա, պատմեմ ձեզ մի դէպք,
Մի պատմութիւն, որ երբէք
Ցիշատակով սպալի
Սրտիս հանգիստ չի տալի։

II.

Գիւղից վերև, ճամբի վրայ
Տերևախիտ մի ծառ կայ.
Անտառիցը նա զատուած,
Մարդու կացնից ազատուած
Դեռ կանգնած է և շողին
Հով է տալիս մշակին.
Իսկ նրանցից ոչ հեռու
Մի լեռնային պարզ առու
Դուրս գալով մութ ծմակից
Խոխոջում է փրփրալից։
Սակայն շատ չէ նա խորին.
Այն առուակում ցէսօրին,
Երբ որ տապից նեղանում,
Գնում էինք լողանում.
Խաղում էինք, վազվզում
Գոյնզգոյն մանրիկ աւազում,
Եւ մեր ձիչը մանկական

Միանալով մի առ ժամ
Այն վտակի աղմուկին
Խաղաղանիստ, խուլ հովին
Կենդանութիւն էր տալիս։
Ա՛խ, որքան էր դիւր դալիս,
Երբ որ տկլոր խուսմբը մեր
Աղաղակով վազում էր
Թիթեռնիկի նաւերից,
Որ թռչում էր թփերից...
Եւ միշտ յոգնած ժամանակ
Հանգչում էինք ծառի տակ։

III.

Այն ժամանակ այնտեղ կար
Այժմ կորած շիրմաքար.
Իմ քոյրերս նրա մասին
Այսպիսի բան ինձ ասին.—
«Այս քարի տակ մեռած ոտած
Սիրուն Մարսն է թաղած։
Ժիր է նա և դիւ[illegible]կան
Նոր էր ինները տա[illegible]կան
Նրանց տուներ [illegible]
[illegible]կան երկու [illegible]

Խնամքոս էին մարդիկը,
Եւ, Մարոյի մայրիկը
Երբ որ նրանց առաջին
Խոնչայ[1] գրեց, ասացին—
«Շնորհակալ ենք Հայ-ազգից,
Հոգ տուէք ձեր օջաղից»[2]:
Այն ժամանակ Մարոյի
Հայրիկն առաւ արագի
Լիքը բաժակն և ասաց—
Կամքդ լինի, Տէր Աստուած...
Նշանեցին Մարոյին,
Տուին չորան Կարոյին:

IV.

Գիտե՞ս ով էր Կարօն. նա
Մի հովիւ էր ուժգահ,
Բոյ-բուսաթին նայելիս
Մարդու սարսափ էր գալիս:
Բայց զոքանչը անսահման
Սիրով սիրում էր նրան.

---

1 Խոնչայ—փայտեայ մատուցարան, որով հաց ու կերակուր են տալիս հիւրերին: 2 Փոխարերական դարձուած է. կընչանակէ ձեր աղջիկն ուզում ենք:

Մարօն ասում էր նոյնպէս
(Նրանից եմ լսել ես)—
«Կարոյին շատ եմ սիրում,—
Ինձ համար միրգ է բերում»։

V.

Մի օր էլ Կարօն ընկերներով
Եկաւ զուռնա-դհոլով,
Եւ Մարոյին զուգեցին—
Երեսին քօղ ձըգեցին,
Հինայ դրին ձեռքերը. . .
Ապա եկաւ տէրտէրը
Խաչ ու աւետարանով,
Օրհնեց օծած բերանով
Կոնաբռնուկ արած
Հարսն ու փեսին, և կամաց
Տարաւ ժամում կանգնեցրեց,
«Տէ՞ր ես, որդեակ» հարցրրեց.
«Տէր եմ» ասաց մեր Կարօն,
Բայց լուռ կանգնած էր Մարօն.
Եւ տէրտէրը նրան այսպէս
Խրատ տուեց—«երբ օր քեզ,
Հնազանդ ես, որդեակ, ասեմ,

Գլուխ կըտաս, դէ տեսնեմ.
«Եւ դու, որդեակ, հնազանդ ես»,
Մարօն շարժուեց, «այ, ապրես»:
Մարոյի հայրն էլ ծէսին
Այսպէս օրհնեց իւր փեսին—
«Զաղայքդ միշտ հերթ լինի,
Մէջքդ ամուր բերդ լինի...»
Իսկ երբ հնչեց «տարան հա՜»ն[1],
Նրան փեսի տուն տարան:
Պատկեցին Մարոյին,
Տուին չոբան Կարոյին:

VI.

Թէ դրբայի դիր-ջանքով,
Սրտակտուր բժժանքով
Նրա սիրտը կտրեցին,
Կամ, թէ նրա հանդերձին
Այն անհոգի չար ջադուն
Քսեց դայլի իւղ թագուն[2],

---

1 «Տարան հա՜» — զուռնայի մի եղանակ է, որ հնչում են հարսին հօրանց տանից ամուսնու տունը տանելիս:

2 Կախարդելու միջոցներից մէկն է:

Այդ չիմացաւ ոչ ոք պարզ.
Միմիայն փոքրիկ նորահարս
Մարօն ասեց իւր մարդուն,
Փախաւ եկաւ հօրանց տուն։
Շատ խրատեց տէրտէրը,
Խրատեցին մեծերը,
Խրատելով էլ կրկին
Տարան տուին Կարոյին։
Գնաց Մարօն, բայց դարձեալ
Զուզեց նրա մօտ մնալ.
Որ ծեծում էր անխնայ,
Թէ միշտ իրան մօտ մնայ...
Զուզեց Մարօն, և թողուն
Փախչում, դալիս էր հօր տուն.
Այնտեղ էլ հայրն էր ծեծում,
Մայրն էր թքում անիծում,
Որ դնայ փեսի մօտ կրկին,
Սիրէ նրան ինչպէս կին։
Մարօն ակ ում էր լայ.—
«Ես նրա մօտ չեմ գ[illegible]...
Ես սիրա մ եմ մ[illegible]ին
Ես չեմ ուզում [illegible] կ[illegible]։

VII.

Մի օր էլ հայրը բարկացած
Ծեծեց նրան և ասաց,
«Դուրս իմ տանից, սևերես,
Եա չընայես դէպի մեզ,
Էլ չըմտնես իմ տունս,
Մրոտեցիր անուանս. . .»
Լալով, ծածկած իւր դէմքը
Թողից Մարօն հօր շեմքը.
Ուրիշ մարդ էլ, ով տեսաւ,
«Աղջիկ, ամօթ քեզ, ասաւ,
Լաւ է մեռնէիր ապրելուց,
Որ փախել ես քո մարդուց:»

VIII.

Եւ, հալածուած հօր տանից,
Իւր ամուսնուց, մարդկանցից,
Սոված, պատռած շորերով
Նա կորչում էր օրերով.
Բայց թէ մի մարդ հոգասէր
Ձեռքը բռնէր և ասէր,—
Մեզ մնա արի, այ թշուառ,

Մի քիչ հայ կեր, կամ մի լար,
Նրա հայրը անաստուած
Հայհոյում էր բարկացած,
Որ չեն թողնում նորատի
Աղջկանը խրատի։
Եւ ամուսնու մօտ՝ ատուած,
Կամ հօր տանը՝ նախատուած,
Կամ կուչ գալով խղճալի
Օջաղի շուրջ օտարի,
Ամեն սրտի ցաւ տալով,
Ապրում էր նա միշտ լալով։

IX

Այսպէս տարիք անց կացան.
Դիմաց տարի մի չբան
Մի օր մեղ ձայն էր տալիս,
Թէ իմացէք, որ քարից,
Կարմիր շորով մի խիլան
Ընկաւ ձորը—մի կածան
Դուրս թափուց ցանք մի դիւղից,
Հետու կանգնած երկիւղ
Ցեսանք բարը քարի տակ
Ընկած կնոջ մի գլուխ

Մարդիկ ինչան ու բերին
Ջարդ ու փշուր Մարոյին.
Եւ ասացին մէկմէկի
Այսպէս խօսքեր անհոգի—
«Վաղուց պէտք է այս անէր,
Կամ թէ իսկի չըծնուէր. . .»
Աղի լալիս էր հայրը,
Կուրծքը կոծում էր մայրը,
Այն ինչ Մարօն պապանձուած
Ոչի՞նչ, ոչինչ չըխօսաց.
Մեռա՜ւ, գնաց խեղճ Մարօն,
Բայց դեռ ապրում է Կարօն։

X.

Սակայն նրա փոքրիկ դին
Պապերի մօտ չըդրին.—
(Մեր տէրտէրի սուրբ գրքում
Գրած էր, թէ նրա հոգում
Չարեր էին բուն դրել. . .
Նաև հաղորդ չէր առել.)
Առանց ժամ ու պատարագ
Այս ճիւղաշատ ծառի տակ
Փոս փորեցին մի խորին,

Ամփոփեցին Մարդին,
Այս լեռ քարն էլ տաշեցին,
Բերին վրէն քաշեցին։

XI:

Շատ եմ տեսել, երբ նրա
Խեղճ մայրիկն այս քարի վրայ
Կորանալով ինքը մէջն
Լաց էր լինում կիսաձայն.
Խունկ էր ծխում, մոմ վառում,
Ու գիշերուան խաւարում
Երևում էր մեն-մենակ
Հեռուից երկար ժամանակ։»

1887 թ.

ԱՌԱՒՕՏ.

Նուէր մեր նոր երիտասարդութեանը.

.....

Սրտամաշ սագաւուկ ծանրը դիշերի...
Ահռելի սարսափ դիշակերներու...
Թառանչում էի և յալահառաչ
Միմիայն արևի լոյս էի խնդրում,
Երբ որ շաղացին մի քանի ճառճանչ
Մութ հորիզոնի մռայլ ամպերում։

Առաւօտն ահա, բացականչեցի,
Եւ թնդաց հողիս. թեթև շնչեցի...
Ցանկալի կեանքի նշան տիներև.—
Պատառուեց ահա թանձր խաւարը,
Օրը բացվում է, և դլխիս վերև
Շառաղունել է երկնակամարը...

1892 *Ե. մարտի* 12.

Ն. Ն.-ԻՆ.

Կեանքի հոսանքն իւր ընթացքում
Մեզ մօտեցրեց միմիանց,
Բայց զգացի ես իմ հոգում
Հէնց նոյն ժամին մի կասկած։

Նախազգացումն ինձ չըխաբեց.—
Ցայտնուեցար դու շուտով,
Եւ մենք այժմ բաժանուած ենք
Սառլութեան անդնդով։

Արդէն ծանրը ես տուժեցի
Քեզ կանչելով բարեկամ,
Էլ մի՛ Ջանար, փարիսեցի,
Գրաւել սէրս միւս անգամ։

Մի՛ բարձրացնիր կենաց բաժակ,
Ինձ մի՛ օրհնիր ժպտերես,
Էլ չի դարձնիլ ոչ մի մաղթանք
Իմ հաւատը դէպի քեզ։—

Քո պատկերը իմ սրտի մէջ.
Նզովելո՜ յիշատակ,
Ամէն անգամ զարթեցնում է
Բուռն ցասումն և տանջանք։

Գուցէ տեսնես ինձ հալածուած,
Անցաւակիր և մենակ,
Թափառելիս անտուն, անհայ...
Սակայն, և այն ժամանակ,

Անհնազանդ արտասուքս
Կամ հառաչանք մի թեթև
Եթէ յանկարծ յայտնեն վիշտս
Ակամայից քո առջև,

Դու մի՛ կարծիր, թէ քեզանից
Կարեկցութիւն եմ խնդրում,
Այլ և ի զուր մի՛ հարցնիր ինձ,
Թէ ինչ ցաւ կայ իմ սրտում։—

Քո խօսքերն իմ տխրութեանը
Զեն լինելու վսխիթար,
Եւ իմ սրտի դաղտնարանը
Միշտ փակուած է քեզ համար։

Երկինք, դետինք թող միանան,
Կանգնի վկայ տիեզերք—
Տուողը հոգուս կարողութեան,
Էլ չեմ սիրիլ քեզ երբէք։

1891 Թ. ապրիլի 10.

* * *

Ինձ մի՛ խնդրիր, ես չեմ երգիլ
Շատ է տխուր իմ երգը,
Նրա ձայնը կլխորտակի
Քնքոյշ սրտիդ բիրկլանքը.
Ո՞չ, քեզ համար այսպիսի երգ
Երգելու չեմ ես կրբէ.ք։

Ես երգեցի սարի վերայ
Եւ չորացան խոտ ու վարդ,
Անապատ է այնտեղ հիմայ,
Ո՞և, ամայի անապատ.
Հառաչանքից այրուած սարում
Էլ ծաղիկ չի դալարում։

Ես երգեցի կէս գիշերին,
Վառ աստղերը իմ երգից
Գունատուեցան, դողդողացին
Եւ չքացան երկնքից.
Մէկը միմիայն, որ փայլում էր,
Այն էլ մահուան աստղն էր...

Բոյր ու զեփիւռ ես կուզէի
Եւ արշալոյս ոսկեվառ,
Որ մի սիրոյ երգ հիւսէի
Եւ երգէի քեզ համար,
Բայց իմ սիրտը բռնած են զեռ
Թոյն ու թախիծ և գիշեր։

1892 Թ. մարտ.

* * *

Երբ գիշերային
Մութ հորիզոնից
Արև կամ լուսին
Երևում են ինձ,
Իմ տխուր հոգում
Ծագում է ոսկի
Ճառագանչը յուսոց
Ցարատև կեանքի,
Եւ մոռացում եմ.—
Աշխարքը դեռ կայ,
Դեռ օր կըտեսնեմ...
Եւ նշանն ահա։
Հրճվում է հոգիս,
Երգում եմ գլուխս,

Եւ ժպտում են ինձ
Թէ Աստուած, թէ մարդ։

Աստծոյ տաճարում
Մոմը սեղանից
Խնկաբոյր ծխում
Վառվում է հանդիսա.
Իմ մռայլ հոգում
Առաքինութեան
Ճշմարիտ կեանքի
Յաւիտենական
Լոյսը ցոլանում,
Վառվում է նոյնպէս.
Սրտով մեղմանում,
Աղօթում եմ ես։

Կուսի աչքերին
Նայում եմ ագահ.
Թնդում է հոգիս,
Դողում ակամայ,
Եւ կենդանութեան
Ախտերը եռում,
Ախորժ այրվում են
Իմ երակներում.

Սիրաս անհանդիստ
Պայթում է, կարծես,
Զզում եմ ցաւ, վիշտ...
Եւ տանջվում եմ ես.
Բայց այն տանջանքը
Քաղցր է ինձ համար,
Քան երկար կեանքը,
Աղօթք փրկարար։

1892 Ի. յունվարի 9.



ԻՄ ՍԻՐԸ.

.....

Ես սիրել եմ վարդը ժժգոյն
Սիրուց տանջուած այտերի,
Մելամաղձոտ խաղաղութիւնն
Զոյգ սևագակ աչերի։

Ես պահել եմ սրտիս խորքում
Մի լուռ գաղտնիք սիրային,
Եւ այն երբէ՛ք, ոչ մի երգում
Յայտնելու չեմ աշխարհին։

Բայց և պահել անկարող եմ,
Օ՜, դժուար է համբերել—
Չասել ինչով բախտաւոր եմ,
Չասել ինչպէս եմ սիրել։

1892 թ. մարտի 18



ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ.

.....

Քո աչքերում որ փայլում է
Հոգուս հուրն է մշտավառ,
Իսկ ժպիտդ, որ բացվում է,—
Սրտիս բերկրանքն անսպառ։

Երբ որ հանդչի հուրն աչքերիդ
Եւ շրթունքդ կարկամի,
Կըմեռանի նաև գերիդ...
Եւ մեղ մի մահ կըտանի։

1891. Թ. Նոյեմբ 9.



ՀՐԱԺԵՇՏ.

Այստեղ ահա կըբաժանուենք.
Մնաս բարեաւ, սիրելի.
Այսպէս ես չեմ ցաւել երբէք
Դառնութիւնով սիրաս լի:

Այստեղ ահա քեզ թողնում եմ
Եւ չըդիտեմ, ուր կերթաս.
Կասկածներից ես զոզում եմ...
Թող պահպանէ քեզ Աստուած:

Ա՛խ, առանց քեզ տխուր կեանքիս
Օրը տարի կըդառնայ,
Բայց, ուր լինիս, դարձեալ հոգիս
Շուրջդ պիտի թրթռայ:

Մնաս բարեաւ, բայց միշտ յիշիր,
Որ քեզ շատ եմ կարօտել,
Եւ տեսութեան ժամի համար:
Զըմոռանաս աղօթել:

1891 Մ. մայիսի 27.

ՑԻՇԵՐ.

Իր չար բաղդի ճանկում բռնուած
Նա քեզանից հեռու մնաց.—
Սիրեց
Քեզ հեռուից,
Զրկուած
Քո բոյրից,
Եւ տանջուեց թոգուն
Գիշերը անքուն:—

Նրա սէրը մնաց անհաս,
Բայց անունը չըմոռանաս,—
Պահիր
Քո մտքում,
Ցիշիր
Աղօթքում.
Եւ քո սրտում նա
Թող անմահանայ:

1892 Ի. 20 մարտի.

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՆ.

.....

Ո՞րն է դրախտը,—վայրն երանաւէտ,
Ուր պիտի ապրեմ դերեզմանից յետ.
Միթէ մարդկային տառապած կեանքը
Զբաստեղծեց այն սուտ մխիթարանքը.
Եւ միթէ նորա մահից սարսափած
Աղահուլթիւնը չէ իրան խաբած...
Սակայն բարի է.—մի տանջուած արդար,
Կամ իրան արդար համարող մի չար
Երկրային կեանքի վերջին վայրկենին
Հանգիստ ու խաղաղ կաւանդէ հոգին
Համաձայն իրան ճաշակի, կամքի
Վայելքն յիւրով խոստացեալ կեանքի.
Եւ ահա միակ, բայց մեծ օգուտը,
Որ մարդկութեանը տուեց այս սուտը:
Ա՞յս է մեր կեանքը.—լոկ խաբէութիւն.
Ո՜հ, միթէ և ես, ինչպէս մի հնչիւն,
Այս իմ յոյսերիս, ձգտումներիս հետ
Պիտի մեռանիմ, չ.քանամ անհետ...

Զէ՛, սիրելի է խոստումն երկնքի—
Յոյս յաւերժական, անվախճան կեանքի.
Հեռու ինձանից, հոգեմաշ կասկած,
Ողջոյն քեզ, ողջոյն, ո՛վ կեանքի Աստուած.
Սրի՛, յայտնուի՛ր, նշկահիր մահու
Տարակուսանաց տագնապն ահարկու
Եւ կոյր հաւատով զօրացրու հոգիս—
Անմահութիւն տուր լքեալ կեանքիս...
Բայց ի՞նչպէս պիտի կեանք առնեմ կրկին.
Արդեօք լուսակամ, աննիւթ, անմարմին
Պիտի սաւառնեմ անծայր եթերքում,
Թէ իբրև մի հունչ շրջեմ աշխարքում,
Թէ անփոյթ, անգործ թափառեմ պիտի
Մարդոց աչքերին անտեսանելի,
Թէ ամպերի մէջ պիտի ես հանգչեմ
Եւ ոսքիս տակից կայծակներ իջնեն...
Օ՜, ներիր Աստուած, ծածկագէտ, անհուն.
Ներիր մեծամիտ, զոռոզ պատանուն.
Աննշան ձձիս չարաչար մեղայ,—
Յանդուգն խորհրդով խորամուխ եղայ,
Զգաեցի պարզել քո աստուածային
Անհասանելի, անմեկին գաղտնին:

1890 Թ. ապրիլ.

ՑԱՆԿ

	ԵՐԵՍ.
Անուշ	3
Սխեմամար (ազգային աւանդութիւն)	40
Մերժած օրէնք	45
Շունն ու Կատուն (ժողովրդական աւանդութիւն)	62
Սի պատկեր	66
Դեպիմ Լաբերիոս (ռուսերէնից)	69
Տարօնի գարունը (հատուած պօէմայից)	72
Նուէր Ան. Աբ.-ին	74
Կանչ	76
Համերգ	79
Դեռ անյիշելի	80
Երբ խօսում էիր	82
Կուրծքս երբեմն եռ է գալիս	83
Ա՛խ, ես երանի	85
Երգչին	86
Ո՛հ, խնայեցէք	87
Լերմօնտովից	88
Յիշողութիւն հայրենիքից	89
Գութանի երգ	93
Տարօնի առաւօտը (հատուած պօէմայից)	95
Վերջին խօսք	98
Խղճալի՜ մարդ	100

ԵՐԵՍ.

Երբ տեսնում եմ 102
Մանկութիւն 104
Մութն էր երկինքը 106
Քրիստոս յարեաւ 107
Գիշերային մտածմունք 108
Նրան 110
Դերասան Ադամեանի մահը 111
Ռոմանս (Պուշկինից). 113
Երգչի վրէժը. 116
Կորուստից յետոյ 117
Քրիստոսն անապատում. 118
Աքիլլէս (Ժուկովսկուց) 119
Երազ. 130
Պատուէր 132
«Ոչ յօրինակ այլոց» 134
Աղղ 135
Մարօ (գիւղացի մանկան պատմութիւն) 136
Առաւօտ. Նուէր մեր նոր երիտասարդութեանը . . 147
N. N.-ին. 148
Ինձ մի խնդրիր 151
Երբ գիշերային 153
Իմ սէրը 156
Խոստովանութիւն 157
Հրաժեշտ 158
Յիշի՞ր 159
Խորհրդածութիւն 160

ՀԵՂԻՆԱԿԸ

Խնդրում է ուղղել ներքև նշանակուած տպագրական սխալները.

Երես	տող	սխալ	ուղիղ
5	ներքեւից 2	գօրքով	զօրով
7	12	հնչեն.	հնչեն,
10	13	իրականութեան	երանութեան
13	3	քօլերի	քօշերի
=	16	պարզնկայ	պարզիկայ
14	3	ռենի	ռինի
—	6	հնչիւն	մի հնչիւն
37	7	ռոչոր	ռլուր
40	7	ճեղքում	ճեղվում
44	13	նա անբարբառ	անբարբառ
47	18	ադօթ	աղօտ
49	5	սիրելի	սիրալի
55	16	անհասկանալի	անհասանելի
56	6	հոգին	հոգի
57	9	փարատում է	փարատում
66	6	չողում	չաղում
87	13	ոն,	ոչ,
88	4	խիղճ	խիղճս
93	3	չուր տուր	չուռ տուր
—	—	խուփիդ	խոփիդ
97	1	քաջալերը	քաջ աչերը
100	վերջին	բանատուր	բնատուր
102	4	մոլորութեանն	մոլութեանն

109	7	ուշավառ	ուշառու
114	3	վառ	վաղ
117	5	կանչես	կանչիս
137	11	Ներանցից	Ներանից
138	Ներքեւից 4	ժիր է	ժիր էր
141	6	Ջաղացքդ	Ջաղացիդ
143	Ներքեւից 3	հոգասէր	հոգեսէր
144	13	սարի	սարից
147	2	դիշակերնելի	դիշատիչնելի
161	2	յոյս	յոյսն

Իսկ „ԿԱՆՉ" ոտանաւորի երրորդ մասի երկրորդ տունը (երես 78) սրբագրողը սխալմամբ ձգել է ոտանաւորի վերջը, որն անհրաժեշտ է իւր տեղը կարդալ։

Նոյնպէս հարկաւոր է համարում կցել այստեղ և ԱՌԱՋԻՆ գրքոյկի տպագրական վրիպակների ցուցակը, որ եղած չէ իւր ժամանակին.

Երես	տող	սխալ	ուղիղ
6	4	խփել	խեթել
12	11	ձորում։	ձորում
21	Ներքեւից 2	ինչ	ուր
32	8	տապարագիր	տապանագիր
55	2	գառիվայրի	գառիվայր
62	5	պահապան	պահնորդ
63	7	համագին	ահագին
65	16	երկինքը	երկիրը
71	Ներքեւից 3	ցուփ	ցոփ
72	2	յոդուց	յոդւոց
77	Ներքեւից 3	անուանում	անում։

ԵՐԵՎԱՆ

109	7	ուշավառ	ուշառու
114	3	վառ	վաղ
117	5	կանչես	կանչիս
137	11	Նրանցից	Նրանից
138	Ներքեւից 4	ժիր է	ժիր էր
141	6	Ջաղացքդ	Ջաղացիդ
143	Ներքեւից 3	հոգատէր	հոգեսէր
144	13	սարի	սարից
147	2	դիշակերնելի	դիշատիչնելի
161	2	յոյս	յոյսն

Իսկ „ԿԱՆՉ“ ոտանաւորի երրորդ մասի երկրորդ տունը (երես 78) սրբագրողը սխալմամբ ձգել է ոտանաւորի վերջը, որն անհրաժեշտ է իւր տեղը կարդալ։

Նոյնպէս հարկաւոր է համարում կցել այստեղ և ԱՌԱՋԻՆ գրքոյկի տպագրական վրիպակների ցուցակը, որ եղած չէ իւր ժամանակին.

Երես	տող	սխալ	ուղիղ
6	4	խփել	խեթել
12	11	ձորում։	ձորում
21	Ներքեւից 2	ինչ	ուր
32	8	տապարագիր	տապանագիր
55	2	գառիվայրի	գառիվայր
62	5	պահապան	պահնորդ
63	7	համագին	ահագին
65	16	երկինքը	երկիրը
71	Ներքեւից 3	ցուփ	ցոփ
72	2	յոդուց	յոդւոց
77	Ներքեւից 3	անուանում	անում։

ԵՊՀ

891.99
Թ-89

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. Մոսկուա, 1890. (սակաւաթիւ). գինն է 35 կոպ., ճանապարհածախսով 45 կոպ., վաճառվում է Թիֆլիսի Կենդրոնական Գրավաճառանոցում։

[2160]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0031744

ЦЕНА
А 514